

ՀՀ կառավարության
առընթեր անշարժ գույքի
կադաստրի պետական կոմիտե

**Հայաստանի Հանրապետության
Ֆիզիկաաշխարհագրական օբյեկտների
համառոտ
տեղեկատու-քառարան**



ԵՐԵՎԱՆ
Գեոդեզիայի և քարտեզագրության
կենտրոն ՊՈԱԿ
2007

ՆԱԽԱԲԱՆ

Ֆիզիկաաշխարհագրական օբյեկտների ներկա տեղեկատու-բառարանն ընդգրկում է Հայաստանի Հանրապետության տարածքում եղած լեռների, նրանց գագաթների, առանձին լեռնագագաթների, լեռնանցքների, բարձրավանդակների, սարահարթերի, կարևորագույն հանդերի և դաշտերի, լճերի, գետերի, ջրամբարների, ջրանցքների, ջրվեժների, աղբյուրների և այլ օբյեկտների ՀՀ կառավարության կողմից հաստատված անվանումները, որոնք ներկայացված են այբբենական կարգով: Յուրաքանչյուր անվանում-գլխաբառից հետո տրվում է նրա սահմանումը, դիրքը և համառոտ բնութագիրը: Տեղեկատու-բառարանն ընդգրկում է ֆիզիկաաշխարհագրական օբյեկտների շուրջ 2775 անվանում:

Տեղեկատու-բառարանի գլխավոր և հիմնական սկզբնաղբյուրներ են հանդիսացել նախկինում հրատարակված 1:25000 մասշտաբի քարտեզները, ՀնՍՀ ջրօրերևութաբանական ծառայության կողմից հրատարակված ջրաբանական տարեգրքերը, Հ. Ս. Ստեփանյանի կազմած “Հայկական ՍՍՌ աշխարհագրական անուններ” (Երևան, 1951թ.) ժողովածուն, “Հայկական սովետական հանրագիտարան”-ը (13 հատոր, Երևան 1974-87թթ.), “Հայկական համառոտ հանրագիտարան”-ը (4 հատոր, Երևան 1990-2003թթ.), Ա. Ա. Ասլանյանի և Հ.Ղ. Գրգեարյանի “Հայկական ՍՍՀ աշխարհագրական անունների համառոտ բառարան”-ը (Երևան, 1981թ.), դաշտային ուսումնասիրություններ և բազմաթիվ այլ կյուրեր:

Մեծ դժվարություն է ներկայացրել օտարահունչ և ձևափոխված անվանումների հայացման խնդիրը, որի լուծման համար ՀՀ կառավարության կողմից 01 հունիսի 2005թ. N 697-Ա որոշմամբ ստեղծվեց աշխարհագրական օբյեկտների անվանակոչման և անվանափոխման մասնագիտական հանձնաժողովը: Հանձնաժողովի եզրակացության հիման վրա ՀՀ կառավարությունը իր որոշումներով հաստատել է աշխարհագրական օբյեկտների անվանումները:

Տեղեկատու-բառարանում անվանում-գլխաբառերը տրված են գլխատառերով, նրանց վերաբերյալ տեղեկությունները՝ սովորական տառատեսակով, որից հետո, անհրաժեշտության դեպքում տրվում են անցյալում գործածված անվանումը (անվանումները): Օրինակ՝

ԳԼՈՒՆ ԶՍԳԵԶՈՐԻ - լեռ (2865 մ) Սյունիքի մարզում,.... (**Չափեճոր, Զանգեզուր**):

ԵՐԼՋԱԿ - լեռնագագաթ (3368 մ) ՀՀ Սյունիքի մարզի և Նախիջևանի սահմանագլխին,..... (**Երկաթասար**):

Հին անվանումները իրենց տեղում, նույնպես տրվում են գլխատառերով և հղվում ներկայիս անվանմանը, որը շարված է շղատառով: Օրինակ՝

ԶՈՐԱԳԵՏ - գետ, տե՛ս **Դեբեդ**:

ՂՈՎԱՍՅԱՆԻ ԼԵՌՆԵՐ - լեռներ, տե՛ս **Եղնախաղի լեռներ**:

Երկու կամ մի քանի նույնանուն տեղանունների առկայության դեպքում, հաջորդակետությունը սահմանվում է ըստ մարզերի այբբենական կարգի: Օրինակ՝

ՄԵՎՔԱՐ - լեռնագագաթ (1740 մ) Գեղարքունիքի և Տավուշի մարզերի սահմանագլխին,.....

ՄԵՎՔԱՐ - գետ Սյունիքի մարզում

ՄԵՎՔԱՐ - լեռնագագաթ (1046 մ) Տավուշի մարզում,

ՄԵՎՔԱՐ - գետ Տավուշի մարզում.....

Տեղեկատու-բառարանն օգտակար կլինի տարբեր մասնագիտության գիտաշխատողների, պետական և տեղական իշխանությունների, դասախոսների, ուսուցիչների և ընթերցող լայն շրջանների համար:

ՏԵՂԵԿԱՏՈՒ-ԲԱՌԱՐԱՆՈՒՄ
ԳՈՐԾԱԾՎՈՂ ԿՐՃԱՏՈՒՄՆԵՐԸ

արլ.- արևելք
արմ.- արևմուտք
հս.- հյուսիս
հվ.- հարավ
կմ - կիլոմետր

մ - մետր
հա - հեկտար
մլն - միլիոն
հզ. - հազար
ՀԷԿ - հիդրոէլեկտրակայան

Ա

ԱԲԱԶՈՐ - հանդ Կոտայքի մարզում, Արզնի-Շամիրամ ջրանցքի ձախափնյակում, Եղվարդ քաղաքից 4,5 կմ հվ-արմ.:

ԱԲԱՐԱՆ - գետ Արագածոտնի և Արմավիրի մարզերում, տե՛ս **Քասաղ**:

ԱԲԵԹ - լեռ (2061 մ) Սյունիքի մարզում, Ջանգեզուրի լեռնահամակարգի հս. մասում, Շաղատ գետի աջափնյակում, Շաղատ գյուղից 1,5 կմ հվ.:

ԱԲՈ - լեռնագագաթ (1460 մ) Տավուշի մարզում, Գուգարաց լեռների արլ. անտառապատ ճյուղավորություններում, Սևքար գյուղից 6 կմ արմ.:

ԱԳԱՐԱԿ - գետ Լոռու մարզում, տե՛ս **Լեջանջուր**:

ԱԳՈՍՎԱՔԱՐ - լեռնագագաթ (3025 մ) Արագածոտնի մարզում, Արագած լեռան հվ-արմ. լանջին, Մեծաձոր գյուղից 8 կմ հս-արլ.:

ԱԳՈՍՎԱՔԱՐ - լեռնագագաթ (1983 մ) Սյունիքի մարզում, Ջանգեզուրի լեռների արլ. փեշերին, Բռնակոթ գյուղից 1,5 կմ հվ.:

ԱԳՈՍՎԱՔԱՐ - հանդ Սյունիքի մարզում, Սյունիքի բարձրավանդակում,

Վարարակ գետի աջափնյակում, Գորիս քաղաքից 1 կմ արմ.:

ԱԶԱՏ - գետ Արարատի և Կոտայքի մարզերում, Արաքսի ձախ վտակը: Կազմավորվում է Գողթ և Ոսկեջուր գետերի միախառնումից: Երկարությունը՝ 40 կմ (**Գառնի**):

ԱԶԱՆ - լճակ Արարատի մարզում, տե՛ս **Վիշապայիճ**:

ԱԶԱՏԵՎ - գետ Վայոց ձորի մարզում: Սկիզբ է առնում Վայքի լեռներից և Վայք քաղաքից 1 կմ հվ-արլ. ձախից միախառնվում է Արփային: Երկարությունը՝ 10 կմ:

ԱԶԱՏԻ ԶՐԱՄԲԱՐ - ջրամբար Արարատի և Կոտայքի մարզերի սահմանագլխին, Ազատ գետի վրա: Զրի ծավալը՝ 70 մլն մ³: Ոռոգում է Երևանի մերձքաղաքային գոտու և Արարատի մարզի հողերը (7100 հա):

ԱԶՆԱՔԱՐ - բլուր (942 մ) Տավուշի մարզում, Ոսկեպարի լեռնահամակարգում, Կոթի գյուղից 4 կմ հս-արլ.:

ԱԶՆՎԱՑՄԱՐ - լեռնագագաթ (2259 մ) Սյունիքի մարզում, Մեղրու լեռնահամակարգում, Մասրուց գետի աջափ-

նյակում, Շիշկերտ գյուղից 4 կմ հվ-արլ.:

ԱԹԱՆ - գետակ Լոռու մարզում: Մարց գետի ձախ օժանդակը: Սկիզբ է առնում Բովաքարի լեռներից և Աթան գյուղից հվ-արմ. միախառնվում մայր գետին: Երկարությունը՝ 9 կմ:

ԱԺՂԱՀԱԿ - լեռ (3597 մ) Գեղարքունիքի և Կոտայքի մարզերի սահմանագրվ-խին, Գեղամա լեռների ամենաբարձր գագաթը:

ԱԼ - լիճ Գեղարքունիքի և Կոտայքի մարզերի սահմանագլխին, Գեղամա լեռների կատարային մասում: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 2735 մ, մակերեսը՝ 0,2 հա:

ԱԼ - լիճ ՀՀ Սյունիքի մարզի և ԼՂՀ-ի սահմանագլխին, Հեղզաց սարավանդի կենտրոնական մասում, 2947 մ բարձրության վրա, Մառնակունք գյուղից հս-արլ.: Մակերեսը՝ 53 հա, միջին խորությունը՝ 1,88 մ:

ԱԼԱԿՆ - լիճ Վայոց ձորի մարզում, Արտավան գյուղից 2,5 կմ արլ., ծովի մակարդակից 2250 մ բարձրության վրա: Մակերեսը՝ 6 հա:

ԱԼԱՐԵՔՍ - գետ Լոռու մարզում: Սկիզբ է առնում Բովաքարի լեռների համանուն գագաթի լանջերից և Դեբետ գյուղից 1,5 կմ հս-արմ. միախառնվում է Դեբեդ գետին: Երկարությունը՝ 24 կմ:

ԱԼԵՆԵՐԻ ԲԼՈՒՐ - լեռնագագաթ (1535 մ) Լոռու մարզում, Փամբակի լեռներում, Վանաձոր քաղաքի Խնձորուտ թաղամասից 0,5 կմ հս.:

ԱԼԵՄԱՐ - լեռ (1142 մ) Արմավիրի մարզում, Կարմրաշենի սարահարթում, Քարակերտ գյուղից 4 կմ հվ-արմ.:

ԱԼԼԻՃ - լիճ Վայոց ձորի մարզում Զանգեզուրի լեռներում, Արտավան գյուղից 2,5 կմ հս-արլ.: Ծովի մակար-

դակից 2240 մ բարձրության վրա: Մակերեսը՝ 6 հա:

ԱԼԾԱՌ - լեռնանցք ՀՀ Գեղարքունիքի մարզի և Ադրբեջանի սահմանագրվ-խին, Միափորի լեռների հվ-արլ. ծայրամասում, Գետիկի հովտից դեպի Ջեզամի հովիտը:

ԱԼԾԱՌԻ ԼԵՌԱՆՆՅՔ - լեռնանցք (2075 մ) ՀՀ Գեղարքունիքի մարզի և Ադրբեջանի սահմանագլխին, Սևանի և Միափորի լեռների հանգուցակետում, Մշակաց գետի վերնագավառում:

ԱԼՁՈՐ - գետակ Վայոց ձորի մարզում, Աղբերիք գետի ձախ օժանդակը: Սկիզբ է առնում Վարդենիսի լեռների հվ. լանջերից և Աղնջաձոր գյուղից 0,5 կմ հս. միանում մայր գետին: Երկարությունը՝ 6 կմ:

ԱԼՈՅՄԱՂԲՅՈՒՐ - աղբյուր Գեղարքունիքի մարզում, Ճարտար լեռան հվ. լանջին, Օժվասար գյուղից 4 կմ հվ-արմ.:

ԱԼՄԱՐ - լեռնագագաթ (1853 մ) Արարատի մարզում, Երախի լեռներում, Կաքավաբերդ գյուղից 11 կմ հվ-արմ.:

ԱԼՎԱՐ - գետ Արագածոտնի մարզում, Քասաղ գետի ձախ օժանդակը: Սկիզբ է առնում Փամբակի լեռների հվ. լանջերից և Միրաք գյուղից 0,5 կմ հս-արմ. ձախից միախառնվում մայր գետին: Երկարությունը՝ 11 կմ:

ԱԼՎԱՐ - լեռնագագաթ (2704 մ) Լոռու մարզում, Փամբակի լեռների հս. լանջին, Հալավար գյուղից 2,5 կմ հվ-արմ.:

ԱԼՈՒԿ - լեռնագագաթ (3707 մ) Սյունիքի մարզում, Զանգեզուրի լեռների հվ. մասում, Քաջարան քաղաքից 6 կմ հվ-արմ.:

ԱՄՊԵՐՆԵՐ - լեռնագագաթ (2192 մ) Վայոց ձորի մարզում, Վայքի լեռների արմ. մասում, Հորադիս գյուղից 3 կմ հվ-արլ.:

ԱՆՈՒՐԻԿ - գետ Շիրակի մարզում: Սկիզբ է առնում Եղնախաղի լեռների

հվ-արմ. լանջերից և Ախուրիկ գյուղի մոտ աջից միախառնվում Ախուրյան գետին: Երկարությունը՝ 25 կմ (**Հայկական**):

ԱՆՈՒՅԱՆ - գետ, Արաքսի ձախ վըտակը: Սկիզբ է առնում Արփի լճի ջրամբարից, Սևգետ աջ վտակն ընդունելուց մինչև Արաքսի մեջ թափվելը հոսում է ՀՀ և Թուրքիայի պետական սահմանով: Երկարությունը՝ 186 կմ:

ԱՆՈՒՅԱՆԻ ԱԶՍՓՆՅԱ ՋՐԱՆՑՔ - ջրանցք Շիրակի մարզում, հանված է Ախուրյան գետի վերին հոսանքի աջ ափից: Երկարությունը՝ 25 կմ: Ոռոգում է Շիրակի մարզի հողերը (7124 հա):

ԱՆՈՒՅԱՆԻ ՋՐԱՄԲԱՐ - Ախուրյան գետի վրա կառուցված արհեստական լիճ ՀՀ և Թուրքիայի սահմանագրված: Մակերեսը կազմում է 54 կմ², ջրի ծավալը՝ 525 մլն մ³: Ոռոգում է Արագածոտնի, Արմավիրի և Շիրակի մարզերի հողերը:

ԱԿՆԱ - լիճ Գեղարքունիքի և Կոտայքի մարզերի սահմանագլխին, Գեղամա լեռների կենտրոնական կատարային մասում, ծովի մակարդակից 3032 մ բարձրության վրա: Մակերեսը՝ 0,8 կմ², խորությունը՝ մինչև 15 մ: Լճի ջուրն օգտագործվում է արոտավայրերի ջրարբիացման համար:

ԱԿՆԱՂԱՇՏ - գոգավորություն Սյունիքի մարզում, Սյունիքի բարձրավանդակում, Որոտան գետի վերնագավառում: Հարուստ է աղբյուրներով: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 2000-2200 մ:

ԱԿՆԱՍԱՂ - լեռնագագաթ (2472 մ) Գեղարքունիքի մարզում, Արեգունի լեռների կենտրոնական մասում, Խաղկան գետի ձախափնյակում, Արտանիշ գյուղից 2,5 կմ հս.:

ԱԿՆԱՋՈՐ - գետ Գեղարքունիքի մարզում: Սկիզբ է առնում Բովնոց լե-

ռան հս. լանջերից և Ակունք գյուղից ներքև ձախից միախառնվում Մասրիկ գետին: Երկարությունը՝ 22 կմ (**Ակունք**):

ԱԿՆԱՍԱՐ - լեռնագանգված (3258 մ) Գեղարքունիքի և Կոտայքի մարզերի սահմանագլխին, Գեղամա լեռների կենտրոնական կատարային մասում, ամենաբարձրը Եռաթմբերի խմբում, Ակնալիճ գյուղից 1 կմ հս-արլ.:

ԱԿՆԵՐ - աղբյուրներ Սյունիքի մարզում, Ձագեձորի բարձունքներում, որտեղից ստացվում է Գորիս քաղաքի ջրամատակարարման զգալի մասը: Ակներ գյուղից 2,5 կմ հս. (**Վարարակ**):

ԱԿՆՏՈՆ - հանդ Գեղարքունիքի մարզում, Գմբեթ լեռան հվ-արլ. լանջին, Մաքենիս գյուղից 3 կմ հվ-արմ.:

ԱԿՈՆԵ - գետ Գեղարքունիքի մարզում, տե՛ս **Ակնաջուր**:

ԱԿՈՆԵ - գետ Կոտայքի մարզում: Սկիզբ է առնում Գեղամա լեռների արմ. ստորոտներից և ձախից միախառնվում Հրազդան գետին: Երկարությունը՝ 13 կմ:

ԱԿՈՆԵ - աղբյուր Վայոց ձորի մարզում, Վայքի լեռների հվ. լանջերին, Հորաղիս գյուղից 5 կմ հվ-արմ.:

ԱԿՈՆԵ - գետակ Տավուշի մարզում, Խնձորուտ գետի ձախ օժանդակը: Սկիզբ է առնում Միափորի լեռների հս. լանջերից և Այգեձոր գյուղից 14 կմ հվ-արմ. միախառնվում մայր գետին: Երկարությունը՝ 8 կմ:

ԱՀՆԻՉՈՐ - գետ Լոռու մարզում: Սկիզբ է առնում Գուգարաց և Բովաքարի լեռների հանգուցակետից և Ահնիձոր գյուղից ներքև ձախից միախառնվում Մարց գետին: Երկարությունը՝ 14 կմ:

ԱՂԱԿՆ - բլուր (893 մ) Տավուշի մարզում, Ոսկեպարի լեռնահամակարգում, Կոթի գյուղից 1 կմ հս-արլ.:

ԱՂԱՆՁ - գետ Սյունիքի մարզում, տե՛ս **Աղանձուզետ**:

ԱՂԱՆՁՈՒԳԵՏ - գետ Սյունիքի մարզում: Սկիզբ է առնում Բարգուշատի լեռներից և Տանձատափ գյուղից 1 կմ հս-արմ. աջից միախառնվում Շվարի-գետին: Երկարությունը՝ 13 կմ (**Աղանձ, Տաթև**):

ԱՂԱՋՈՒՐ - գետակ Սյունիքի մարզում, Այրիգետի ձախ օժանդակը: Սկիզբ է առնում Սապատաձորի լեռանցքից և Նժդեհ գյուղից արլ. միանում մայր գետին: Երկարությունը՝ 3,5 կմ:

ԱՂԱՎԱՍԲՈՒՐ - բլուր (962 մ) ՀՀ Տավուշի մարզի և Ադրբեջանի սահմանագլխին, Կենաց լեռների համակարգում, Ներքին Կարմիրաղբյուր գյուղից 2,5 կմ հս-արլ.:

ԱՂԱՎԱՋՈՐ - գետ Վայոց ձորի մարզում: Սկիզբ է առնում Քարկատար լեռների հվ. ճյուղավորություններից և Արենի գյուղից վերև աջից միախառնվում Արփային: Երկարությունը՝ 16 կմ:

ԱՂԱՎԱՋՈՐԻ ՄԱՐԱՎԱՆՆԵՐ - սարավանդ Վայոց ձորի մարզում, Արփա գետի աջ ափի և Աղավնաձոր գյուղի միջև: Բարձրությունը՝ 1200-1500 մ:

ԱՂԱՎՆՈ - լեռ (2309 մ) Արագածոտնի մարզում, Թեղենյաց լեռների հվ-արմ. ճյուղավորություններում, Ջրամբար գյուղից 2,5 կմ հս-արլ.:

ԱՂԱՎՆՈ - գետ ՀՀ Սյունիքի մարզի և ԼՂՀ-ի տարածքում, Արաքսի ձախակողմյան վտակը: Սկիզբ է առնում Սյունիքի բարձրավանդակից և ԼՂՀ-ի տարածքում միանում մայր գետին: Երկարությունը՝ 75 կմ, ՀՀ-ի սահմանում՝ 5 կմ:

ԱՂԱՔԱՐ - գետակ Գեղարքունիքի մարզում: Սկիզբ է առնում Կարմիրի լեռնանցքի հվ-արլ. մասից բխող աղբյուրներից և թափվում Գետիկը: Երկարությունը՝ 7,5 կմ:

ԱՂԱՔԱՐ - լեռնագագաթ (1657 մ) Լոռու մարզում, Վիրահայոց լեռների հվ. ճյուղավորություններում, Արդվի գյուղից 1 կմ հվ.:

ԱՂԲԵՐԻՔ - գետ Վայոց ձորի մարզում, Մելիմագետի աջ օժանդակը: Սկիզբ է առնում Վարդենիսի լեռների Գնդասար գագաթի հվ-արլ. լանջերից: Երկարությունը՝ 10 կմ:

ԱՂԲԻՄ - բլուր (855 մ) ՀՀ Սյունիքի մարզի և ԼՂՀ-ի սահմանագլխին, Բարգուշատի լեռնահամակարգում, Տափաձոր գետի աջափնյակում, Եղվարդ գյուղից 4 կմ արլ.:

ԱՂԲՅՈՒՆԿԻ ՋՐԱՄԲԱՐ - ջրամբար Կոտայքի մարզում, Հրազդան գետի վրա, Հրազդան քաղաքի տարածքում, Արգելի շէնք-ի արհեստական ջրավազանը: Բարձրությունը ծովի մակարդակից 1695 մ է, մակերեսը՝ 133 հա, ջրի ծավալը՝ 5,8 մլն մ³:

ԱՂԲՅՈՒՆԿԻ ՋՐԱՆՑՔ - ջրանցք Կոտայքի մարզում: Հանված է Հրազդան գետից՝ նրա վերին հոսանքի ձախ ափից, ոռոգում է Կոտայքի մարզի հողերը: Երկարությունը՝ 16 կմ:

ԱՂԲՅՈՒՆԵՐԻ ՉՈՐ - սարավանդ Շիրակի մարզում, Հոդմիկ գետի հովտում, Հոդմիկ գյուղից 1,5 կմ հս-արլ.:

ԱՂԵՆԻՃ - ցամաքալեզվակ Գեղարքունիքի մարզում, Նորատուսի թերակղզու հս. ծայրին:

ԱՂԻԼԵՆ - լեռնագագաթ (2218 մ) Սյունիքի մարզում, Չանգեզուրի լեռնահամակարգի հս. մասում, Մավլարդ գյուղից 1,5 կմ հս.:

ԱՂԻՋՈՐ - ձոր Սյունիքի մարզում, Գորիս քաղաքից 1 կմ հս-արլ., Գորիս-Ստեփանակերտ ճանապարհի վրա:

ԱՂԼԵՆ - լեռ Արմավիրի մարզում, տե՛ս **Սալիսակաբլուր**:

ԱՂՁ - գետ Արարատի մարզում: Սկիզբ է առնում Գեղամա լեռների հվ-

արմ. լանջերից և աջից միախառնըվում
Վեղի գետին: Երկարությունը՝ 16 կմ:

ԱՂՁՔ - բլուր (1189 մ) Արագածոտնի
մարզում, Ամբերդ գետի աջափնյա-
կում, Աղձք գյուղից 1,5 կմ հվ.:

ԱՂՆՈՎԱՏ - գետակ Տավուշի մար-
զում, Գետիկի աջ օժանդակը: Սկիզբ է
առնում Միափորի լեռների հվ. լանջե-
րից և Աղավնավանք գյուղի հվ. մասում
միախառնվում մայր գետին: Երկա-
րությունը՝ 5,5 կմ:

ԱՂՆՁԱ - գետ ՀՀ հս-արլ. մասում:
Սկիզբ է առնում Միափորի լեռների հս.
լանջերից, հոսում Տավուշի մարզի արլ.
մասով, ապա Աղբբեջանի տարածքում
աջից միախառնվում է Տավուշ գետին:
Երկարությունը՝ 47 կմ:

ԱՂՈԹԱՁՈՐ - գետ Գեղարքունիքի
մարզում: Սկիզբ է առնում Վարդենիս
լեռնագագաթի հս-արլ. լանջերից և
Մաքենիս գյուղից ներքև ձախից միա-
խառնվում Կարճաղբյուր գետին: Եր-
կարությունը՝ 12 կմ:

ԱՂՈԹԱՍՄԱՐ - լեռ (1581 մ) Լոռու մար-
զում, Վիրահայոց լեռների համակար-
գում, Տաշիր գետի աջ կողմում, Տաշիր
քաղաքից 1 կմ արլ.:

ԱՂՈԹԱՔԱՐ - լեռնագագաթ (2259 մ)
Սյունիքի մարզում, Սյունիքի բարձրա-
վանդակում, Վերիշեն գյուղից 3,5 կմ
հս-արլ.:

ԱՂՈԹԱՔԱՐԻ ԼԵՌՆԱՆՁՔ - լեռնանցք
(2128 մ) Սյունիքի մարզում, Սյունիքի
բարձրավանդակում, Վերիշեն և Վա-
ղատուր գյուղերի միջև:

ԱՂՈՋՐԻԿ - աղբյուր Արարատի մար-
զում, Արտաշատի ջրանցքի ձախ ա-
փին, Վեղի քաղաքից 3 կմ հս-արմ.:

ԱՂՈՋՐԻԿ - գետակ Սյունիքի մար-
զում, Վարարակ գետի ձախ օժանդա-
կը: Սկիզբ է առնում Գորիս քաղաքից 3
կմ հս-արլ. գտնվող բլուրների լան-
ջերից և քաղաքի մեջ միանում մայր
գետին: Երկարությունը՝ 3,5 կմ:

ԱՂՋԿԱՐԵՐԴ - լեռնագագաթ (2476 մ)
Վայոց ձորի մարզում, Վայքի լեռնա-
համակարգում, Հորաղիս գյուղից 2 կմ
հվ-արմ.:

ԱՂՋԿԱՐԵՐԴ - գետ Տավուշի մար-
զում, Աղնջա գետի ձախ օժանդակը:
Սկիզբ է առնում Սպիտակքար լեռան
հս. լանջից և Այգեձոր գյուղից 4 կմ հվ-
արմ. միախառնվում մայր գետին: Եր-
կարությունը՝ 10 կմ:

ԱՂՋԿԱՆՎԱԳ - լեռնագագաթ (2339մ)
Վայոց ձորի մարզում, Վարդենիսի լեռ-
նահամակարգում, Ելփին գյուղից
5,5կմ հս-արլ.:

ԱՂՋԿԱՍՄԱՐ - լեռնագագաթ (1784 մ)
Սյունիքի մարզում, Բարգուշատի լեռ-
ների հվ. ճյուղավորություններում, Ե-
ղեգ գյուղից 2 կմ հս.:

ԱՂՋԿԱՔԱՐ - ժայռ (945 մ) Տավուշի
մարզում, Աղնջա գետի աջափնյակում,
Այգեձոր գյուղից 3,5 կմ հվ-արմ.:

ԱՂՄՏԵՎ - գետ Լոռու և Տավուշի մար-
զերում, Կուրի աջ վտակը: Սկիզբ է
առնում Փամբակի լեռների Թեժլեռ գա-
գաթի հս-արմ. լանջերից: Երկարու-
թյունը՝ 133 կմ, այդ թվում ՀՀ-ում՝ 99
կմ (պատմական՝ **Լոփնաս**):

ԱՂՎԵՍՄԱՁՈՐ - հանդ Կոտայքի մար-
զում, Սևաբերդ գյուղից 1,5 կմ հվ-արլ.:

ԱՂՎԵՍԱՍՄԱՐ - լեռնագագաթ (1529 մ)
Սյունիքի մարզում, Բարգուշատի լեռ-
նահամակարգում, Քարակիտուկձոր
գետի աջափնյակում, Կաղնուտ գյուղի
հս. մասում:

ԱՂՎԵՐՁԱՁՈՐ - գետ Սյունիքի մար-
զում: Սկիզբ է առնում Բարգուշատի
լեռներից և Լեռնաշեն գյուղի մոտ աջից
միախառնվում Շենաթաղ գետին:
Երկարությունը՝ 10 կմ:

ԱՂՈՏ - հանդ Գեղարքունիքի մար-
զում, Գմբեթ լեռան հս. լանջին, Մաքե-
նիս գյուղից 4 կմ հվ-արմ.:

ԱՂՈՏԱՔԱՐ - լեռնագագաթ (3094 մ) ՀՀ
Սյունիքի մարզի և Նախիջևանի սահ-

մանագլխին, Ջանգեզուրի լեռներում, Գորայք գյուղից 10,5 կմ հվ-արլ.:

ԱՃԱՆԱՆ - լեռնագագաթ (2393 մ) Սյունիքի մարզում, Բարգուշատի լեռների կենտրոնական մասում, Քաշունի գյուղից 2,5 կմ հվ-արլ. (**Տափասար**):

ԱՃԱՆԱՆ - գետ Սյունիքի մարզում, Ողջիի ձախ վտակը: Սկիզբ է առնում Բարգուշատի լեռների հվ. լանջերից և Սյունիք գյուղից արմ. միանում մայր գետին: Երկարությունը՝ 29 կմ (**Նորաշենիկ**):

ԱՍՏԱՌԻՃ - լեռնագագաթ (2962 մ) Գեղարքունիքի մարզում, Վարդենիսի լեռների կենտրոնական մասում, Վարդենիկ գյուղից 13 կմ հվ.:

ԱՍՏԱՌՑ - հանդ Շիրակի մարզում, Ավզնոց լեռան հվ. լանջերին, Արթիկի ջրանցքի աջափնյակում, Մեծ Մանթաշ գյուղից 8 կմ հվ-արլ.:

ԱՍՏԱՐԻԱ - գետ Շիրակի մարզում: Սկիզբ է առնում Եղնախաղի լեռների արլ. ճյուղավորություններից և աջից միախառնվում է Ախուրյանին: Երկարությունը՝ 10 կմ:

ԱՍԲԵՂ - գետ Արագածոտնի մարզում: Սկիզբ է առնում Արագած լեռան հվ. լանջերից և Ամբերդ գյուղի մոտ աջից միախառնվում Քասաղին: Երկարությունը՝ 36 կմ:

ԱՍԲԵՂԱՆԻՃ - լիճ Արագածոտնի մարզում, Արագած լեռան մերձկատարային սարավանդի հս-արմ. մասում, ծովի մակարդակից 3110 մ բարձրության վրա: Մակերեսը՝ 17 հա, խորությունը՝ 1,7 մ:

ԱՍԲԵՂԱՍՏԱՐ - լեռնագագաթ (2568 մ) Արագածոտնի մարզում, Արագած լեռնազանգվածի հվ-արլ. լանջին, Նիգատուն գյուղից 8 կմ հվ-արմ.:

ԱՍԲԵՂԻ ԶՐԱՆՑՔ - ջրանցք Արագածոտնի մարզում, հանված է Ամբերդ գետից: Երկարությունը՝ 9 կմ: Ոռոգում է Արագածոտնի մարզի հողերը:

ԱՄԼԱՍԵՌ - լեռնագագաթ (2939 մ) Սյունիքի մարզում, Սյունիքի բարձրավանդակում, Ակներ գյուղից 5 կմ հս-արմ.:

ԱՄՊԱՋՈՐ - գետակ Կոտայքի մարզում, Թեժ գետի օժանդակը: Սկիզբ է առնում Ամպասար լեռան արլ. լանջերից և թափվում մայր գետը: Երկարությունը՝ 7 կմ:

ԱՄՊԱՍԱՐ - լեռնագագաթ (3053 մ) Լոռու և Կոտայքի մարզերի սահմանագլխին, Փամբակի լեռներում, Թեժլեռից արլ., Մեղրածոր գյուղից 7 կմ հս.:

ԱՄՊԱՍԱՐ - լեռնագագաթ (2082 մ) Սյունիքի մարզում, Բարգուշատի լեռնասահմակարգում, Գիրաթաղ գետի աջափնյակում, Ներքին Գիրաթաղ գյուղից 1,5 կմ հս-արմ.:

ԱՄՊՈՐ - լեռնագագաթ (3235 մ) Արագած լեռնազանգվածի հվ. լանջին, Քարի լճից հվ., Ամբերդ գետի հովտի ձախափնյակում:

ԱՄՈՒԼՍԱՐ - լեռնագագաթ (2988 մ) Սյունիքի և Վայոց ձորի մարզերի սահմանագլխին, Ջանգեզուրի լեռների հս. մասում, Սարավան գյուղից 5,5 կմ արլ.:

ԱՄՈՒԼՍԱՐԻ ԼԵՌՆԵՐ - լեռներ Սյունիքի և Վայոց ձորի մարզերի սահմանագլխին: Կազմում են Ջանգեզուրի լեռների հս. մասը: Լեռկասար գագաթից մինչև Փոքր Ծարասար լեռնասահմանագույցը: Ամենաբարձր գագաթը համանուն լեռն է (2988 մ): Երկարությունը՝ 25 կմ:

ԱՄՈՒԼՍԱՐԻ ՍԱՐԱՎԱՆ - սարավանդ Սյունիքի մարզում, Սյունիքի բարձրավանդակում, Որոտան գետի ձախափնյակում: Բարձրությունը՝ 1800 -2200 մ:

ԱՅԳԱԲԱՑ - գետ Շիրակի մարզում: Սկիզբ է առնում Շարայի լեռան լանջերից և Ախուրյան գյուղի հվ-արլ. մա-

սում ձախից միախառնվում Ջաջուռ գետին: Երկարությունը՝ 18 կմ:

ԱՅԳԵԿ - այգի Վայոց ձորի մարզում, Գնիշիկ գետի ձախափնյակում, Գնիշիկ գյուղից 2,5 կմ հս-արմ.:

ԱՅԳԵՆԱՆ - հանդ Գեղարքունիքի մարզում, Սևանա լճի ափամերձ գոտում, Վարդենիկ գյուղից 1,5 կմ հս-արմ.:

ԱՅԳԵՁՈՐ - քարանձավախումբ Երեվանի՝ Գենտրոն համայնքի հս-արմ մասում, Հրազդանի ձախափնյակում:

ԱՅԼԱՁՈՐ - գետակ Սյունիքի մարզում, Կարթ գետի ձախ օժանդակը: Սկիզբ է առնում Գազանա լեռնանցքից և Նոր Աստղաբերդ գյուղից 7 կմ հվ-արմ. միանում մայր գետին: Երկարությունը՝ 3 կմ:

ԱՅՏԱԳԵՏ - գետակ Գեղարքունիքի և Տավուշի մարզերում, Խաչարձան գետի աջ օժանդակը: Սկիզբ է առնում Սառնուտ լեռան հս. լանջից և Ճերմակավան գյուղից 1 կմ հվ-արլ. միախառնվում մայր գետին: Երկարությունը՝ 6 կմ:

ԱՅՏԱԺԱՅՈ - լեռնագագաթ (1423 մ) Տավուշի մարզում, Վարազի լեռնահամակարգում, Իջևան քաղաքից 3,5 կմ հս-արլ.:

ԱՅՏԱՂՔՑՈՐ - գետակ Տավուշի մարզում, Տավուշ գետի աջ օժանդակը: Սկիզբ է առնում Արծվաբերդ գյուղից 6 կմ հվ-արմ. գտնվող աղբյուրներից և Բերդ քաղաքից 2,5 կմ հվ-արմ. միախառնվում մայր գետին: Երկարությունը՝ 3,5 կմ:

ԱՅՏԱՍԱՐ - լեռնագագաթ (2242 մ) Կոտայքի մարզում, Գեղամա լեռների արմ. լանջին, Ջուլք գյուղից 7 կմ արլ.:

ԱՅՏԱՍԱՐ - լեռնագագաթ (2470 մ) Վայոց ձորի մարզում, Չանգեզուրի լեռների հս-արմ. ծայրամասում, Ջերմուկ քաղաքից 0,5 կմ արլ.:

ԱՅՏԻՑ - լեռ (2342 մ) Սյունիքի մարզում, Չանգեզուրի լեռնահամակարգի հս. մասում, Որոտան գետի աջափնյակում, Սպանդարյան գյուղից 2 կմ հվ-արմ.:

ԱՅՐԱՏՈՆ - լեռնագագաթ (1868 մ) Տավուշի մարզում, Գուգարաց լեռների միջին մասի արլ. լանջին, Ցլաջուր և Խաչաղբյուր գետերի միջև, Ենքավան գյուղից 13 կմ հս-արմ.:

ԱՅՐԱՆԱՆ - հանդ Սյունիքի մարզում, Վարարակ գետի աջափնյակում, Քարահունջ գյուղից 2 կմ հվ.:

ԱՅՐԻ - գետակ Սյունիքի մարզում, Կահուրդ գետի ձախ օժանդակը: Սկիզբ է առնում Բարգուշատի լեռներից և Կիցք գյուղում միանում մայր գետին: Երկարությունը՝ 5,5 կմ:

ԱՅՐԻ ՔԱՐ - հանդ Գեղարքունիքի մարզում, Դիվասար լեռան հս-արլ. լանջին, Ոսկեջեն գետի միջին հոսանքի մասում, Վերին Շորժա գյուղից 6,5 կմ հվ-արմ.:

ԱՅՐԻԳԵՏ - գետ Սյունիքի մարզում: Սկիզբ է առնում Բարգուշատի լեռների արմ. մասերից և Տուրքս գյուղից 1 կմ հվ. թափվում է Տուրքսի ջրամբարը: Երկարությունը՝ 22 կմ:

ԱՅՐԻՋՈՐ - գետ Սյունիքի մարզում, Մեղրի գետի աջ օժանդակը: Սկիզբ է առնում Չանգեզուրի լեռների հվ-արլ. լանջերից և Լիճք գյուղից հվ. միախառնվում մայր գետին: Երկարությունը՝ 11 կմ:

ԱՅՐԻՄԱՐ - բլուր (891 մ) Արարատի մարզում, Վեդի գետի աջափնյակում, Վեդի քաղաքից 2,5 կմ արմ.:

ԱՅՐԻՄԱՐ - լեռնագագաթ (3126 մ) ՀՀ Սյունիքի մարզի և Նախիջևանի սահմանագլխին, Չանգեզուրի լեռների միջին մասում, Ցղունի գյուղից 8 կմ հվ.:

ԱՅՐՔ - քարանձավ Երևանի Արաբկիր համայնքում, Հրազդան գետի ձախափնյակում:

ԱՆԱՀՏԱԿԱՆ - աղբյուր Գեղարքունիքի մարզում, Արևելյան Սևանի լեռների արմ. լանջին, Սոթքի լեռնանցքից 1,5 կմ արմ., Սոթք գյուղից 5,5 կմ հս-արլ.:

ԱՆԱՄԱԹԱՂ - բլուր (879 մ) Արմավիրի մարզում, Վաղարշապատ քաղաքից 2 կմ հվ-արլ.:

ԱՆԱՄԱՄԱՐ - լեռնագագաթ (1601 մ) Վայոց ձորի մարզում, Թեքսարի լեռների հվ-արմ. ճյուղավորություններում, Մալիշկա գյուղից 3 կմ հս-արմ.:

ԱՆՂՐԱՆԻԿ - լեռնագագաթ (3135 մ) Լոռու և Շիրակի մարզերի սահմանագրվյալին, Ջավախքի լեռների առանցքային գոտում, Սարագյուղից 7 կմ հվ-արլ.:

ԱՆԻՄՈՆ - լեռնագագաթ (2319 մ) Լոռու և Շիրակի մարզերի սահմանագրվյալին, Փամբակի լեռնահամակարգում, Ծաղկաբեր գյուղից 5 կմ հվ.:

ԱՆԿԱՆՔ - գետ Վայոց ձորի մարզում: Սկիզբ է առնում Մուրադասար լեռան լանջերից և Կեչուտ գյուղից վերև աջից միախառնվում Արփային: Երկարությունը՝ 13 կմ:

ԱՆԿՑՈՆԱՄԱՐ - բլուր (1865 մ) Շիրակի մարզում, Արագածի լեռնագանգվածի հս-արմ. ստորոտին, Շիրակի սարահարթի արլ. կողմում, Արթիկ քաղաքից 0,5 կմ հվ-արմ.:

ԱՆՁԱՎԱԲԱՅՍ - լեռնագագաթ (2420 մ) Տավուշի մարզում, Գուգարաց լեռնահամակարգում, Դիլիջան քաղաքից 4,5 կմ հս-արմ.:

ԱՆՁԱՎԱՄԱՐ - բլուր (1021 մ) Արարատի մարզում, Վեդի գետի ձախափնյակում, Վանաշեն գյուղից 2 կմ հվ-արլ.:

ԱՆՁԱՎԱՄԱՐ - լեռնագագաթ (2739 մ) Վայոց ձորի մարզում, Վայքի լեռներում, Արտավան գյուղից 6 կմ հվ-արլ.:

ԱՆՁԱՎԻ ԶՈՐ - ձոր Շիրակի մարզում, Շիրակի սարահարթում, Լուսաղբյուր

գյուղից 1 կմ հվ-արլ.: Երկարությունը՝ 1,5 կմ:

ԱՆՁԱՎԻԿ - քարանձավ Գեղարքունիքի մարզում, Վարդենիսի լեռնահամակարգում, Երիցասար լեռան հս-արլ. մասում, Վերին Շորժա գյուղից 4 կմ հվ-արմ.:

ԱՆՁԱՎՔ - լեռնագագաթ (2219 մ) Արագածոտնի մարզում, Արագածի լեռնահամակարգի հս. մասում, Ծաղկահովիտ գյուղից հվ.:

ԱՆՋՐԻ - լեռնագագաթ (2673 մ) ՀՀ Վայոց ձորի մարզի և Նախիջևանի սահմանագրվյալին, Խնձորուտ գյուղից 6 կմ արմ.:

ԱՆՋՈՐ - հանդ Սյունիքի մարզում, Վաղատուր գետի աջափնյակում, Վաղատուր գյուղից 2 կմ հվ-արմ.:

ԱՆՏԱՌԱՄՈՒՏ - գետ Լոռու մարզում: Սկիզբ է առնում Բագումի լեռների արլ. ճյուղավորությունների լանջերից և ձախից միախառնվում Փամբակ գետին: Երկարությունը՝ 12 կմ (**Քոլագեբան**):

ԱՆՏԱՌԱՊԱՀ - լեռնագագաթ (1844 մ) Լոռու մարզում, Փամբակի լեռնահամակարգում, Մուրբկիրակիջուր գետի աջ կողմում, Շահումյան գյուղից 1,5 կմ հվ-արլ.:

ԱՆՏԱՌԱՋՈՐ - գետակ Կոտայքի մարզում, Բջնի գետի ձախ օժանդակը: Սկիզբ է առնում Ծաղկունյաց լեռան արլ. լանջից և Ծաղկածոր քաղաքից արմ. միանում մայր գետին: Երկարությունը՝ 4 կմ.:

ԱՆՏԱՌՈՒՏ - լեռնագագաթ (2228 մ) Կոտայքի մարզում, Գոմրագետից ձախափնյակում, Մեղրածոր գյուղից 3 կմ հս-արլ.:

ԱՆՏԱՌՈՒՏ - լեռնագագաթ (2027 մ) Տավուշի մարզում, Գուգարաց լեռների համակարգում, Խաչաղբյուր գետի ձախափնյակում, Ահնիձոր գյուղից 9 կմ արլ.:

ԱՆՏՈՆԻ ՔԱՐ - ժայռ (2352 մ) Վայոց ձորի մարզում, Վայքի լեռնահամակարգում, Գնիշիկ գետի աջ կողմում, Գնիշիկ գյուղից 1 կմ հս-արլ.:

ԱՆՓԱՅՏ ՄԱՅՄԵՆ - լեռնագագաթ (2534 մ) Լոռու մարզում, Փամբակի լեռների հս. լանջին, Հալավար գյուղից 3 կմ հս-արլ.:

ԱՇԽԱՂՀԱՏԵՄ - լեռնագագաթ (2063 մ) Սյունիքի մարզում, Բարգուշատի լեռների կատարային մասում, Տանձավեր գյուղից 1,5 կմ հվ-արլ.:

ԱՇԽԱԿ - լեռնագագաթ (1501 մ) Արագածոտնի մարզում, Արագած լեռնագանգվածի հվ-արմ. լանջին, Աշնակ գյուղից 2 կմ արլ.:

ԱՇԽԱԿ - գետ Արագածոտնի մարզում: Սկիզբ է առնում Արագած լեռան հվ-արմ. լանջերից և ձախից միանում Մաստարայի սելավի հունին, հոսում է միայն գարնանը: Երկարությունը՝ 38 կմ:

ԱՇԽԱԿ - հանդ Արագածոտնի մարզում, համանուն գետի աջափնյակում, Աշնակ գյուղից 2 կմ հվ.:

ԱՇԽԱԿԱՁՈՐ - ձոր Արագածոտնի մարզում, Աշնակ գետի ավազանում: Ձգվում է Կաթնաղբյուր գյուղից մինչև Արմավիրի մարզ հս.-հվ. ուղղությամբ: Երկարությունը՝ 16 կմ:

ԱՇՈՐԱ - լեռնագագաթ (2566 մ) Վայոց ձորի մարզում, Զանգեզուրի լեռների հս. մասում, Որոտանի լեռնանցքից արմ., Արտավան գյուղից 4 կմ հս-արլ.:

ԱՇՈՑՔ - գետ Շիրակի մարզում: Սկիզբ է առնում Ջավախքի լեռների արմ. լանջերից և ձախից միախառնըվում Ախուրյանին: Երկարությունը՝ 26 կմ (**Ղուկասյան**):

ԱՇՈՑՔԱՐ - լեռնագագաթ (2774 մ) Շիրակի մարզում, Ջավախքի լեռների արմ. բազուկների վրա, Սիզավետ գյուղից 5,5 կմ արլ.:

ԱՇՈՑՔԻ ՄԱՐԱՀԱՐԹ - բարձրադիր բլրավետ հարթավայր (1900-2100 մ) ՀՀ հս-արմ. մասում, Կարսի սարահարթի հս-արլ. հատվածը: Եզերված է արմ.-ից Եղնախաղի, իսկ արլ.՝ Ջավախքի լեռնաշղթաներով:

ԱՉԱՋՈՐ - գետ Տավուշի մարզում: Սկիզբ է առնում Գուգարաց լեռների արլ. ճյուղավորություններից և ձախից միախառնվում Աղստեին: Երկարությունը՝ 10 կմ:

ԱՉԱՔԱՐ - լեռնագագաթ (1522 մ) Սյունիքի մարզում, Բարգուշատի լեռնահամակարգում, Որոտան գետի աջափնյակում, Տանձատափ գյուղից 0,5 կմ հս-արլ.:

ԱՉԱՔԱՐ - լեռնագագաթ (1070 մ) Սյունիքի մարզում, Մեղրու լեռների համակարգում, Մեղրի գետի ձախափնյակում, Մեղրի քաղաքից արլ.:

ԱՉԵՐ - գետ Լոռու մարզում: Սկիզբ է առնում Գուգարաց լեռների Հավալաներսար լեռան հվ. լանջից և Հաղպատ գյուղի մոտ աջից միախառնըվում Դեբեդին: Երկարությունը՝ 15 կմ:

ԱՉՔԱՄԱՐ - լեռնագագաթ (3196 մ) Լոռու մարզում, Ջավախքի լեռների ամենաբարձր գագաթը ՀՀ տարածքում, Սարազյուղից 6 կմ արլ.:

ԱՊԱԿԵՄԱՐ - լեռնագագաթ (1794 մ) Լոռու մարզում, Վիրահայոց լեռների կենտրոնական մասի հվ. ճյուղավորություններում, Սարատովկա գյուղից 3 կմ արլ.:

ԱՊԱԿԵՔԱՐ - լեռնագագաթ (1651 մ) Տավուշի մարզում, Իջևանի լեռների հվ-արմ. մասում, Հովք գյուղից 1,5 կմ արմ.:

ԱՊԱՐԱՆԻ ԴՄՇՏ - բարձրադիր (1800-2000 մ) լեռնային մարգագետնատափաստանային հարթավայր Քասաղ գետի ավազանի վերին մասում: Եզերված է արմ-ում՝ Արագած լեռնագանգվածով, արլ-ում՝ Ծաղկունյաց լեռ-

ներով: Ձգվում է հս-արմ.— հվ-արլ. ուղղությամբ շուրջ 30 կմ երկարությամբ, լայնությունը՝ 5-8 կմ:

ԱՊՐԱՆԻ ՋՐԱՄԲԱՐ - արհեստական լիճ Արագածոտնի մարզի հս. մասում, Քասաղ գետի վրա: Մակերեսը՝ 8 կմ², ջրի ծավալը՝ 90 մլն մ³: Օգտագործվում է ոռոգման նպատակներով:

ԱՊՉԳԱ - հանդ Սյունիքի մարզում, Մեղրու լեռնահամակարգում, Մասրուց գետի աջափնյակում, Շիշկերտ գյուղից 3,5 կմ հվ-արլ.:

ԱՊՐԵՆ ԼԻՃ - լիճ Կոտայքի մարզում, Լեռնանիստ գյուղից 6 կմ հվ-արլ., Կլոբ-Թառ լեռան հս-արմ. լանջին: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 2250 մ, մակերեսը՝ 0,6 հա:

ԱՋ ԽՈՐԱՋՈՐ - գետակ Գեղարքունիքի մարզում, Դարանակ գետի աջ օժանդակը: Սկիզբ է առնում Սևանի լեռների հվ-արլ. լանջերից և Կուտական գյուղից 6 կմ արլ. միախառնվում մայր գետին: Երկարությունը՝ 4,5 կմ:

ԱՋԱԿՈՆ - բլուր (857 մ) Տավուշի մարզում, Վարազի լեռնահամակարգում, Աղստև գետի աջափնյակում, Խաշթառակ գյուղի հս-արմ. եզրին:

ԱՋԱՓՆՅԱԿ - քարանձավախումբ Երևանի՝ համանուն համայնքի արլ. մասում, Հրազդան գետի աջափնյակում:

ԱՋՔԱՐ - հանդ Տավուշի մարզում, Կենաց լեռների փեշերին, Չինչին գյուղից 2,5 կմ հվ-արմ.:

ԱՌԱՔԵԼ - լեռնագագաթ (1978 մ) Լոռու մարզում, Վիրահայոց լեռներում, Գայլեղրունք լեռնանցքից հվ-արլ., Պրիվոլնոյե գյուղից 3 կմ հս-արլ.:

ԱՌՑՈՒՄ - լեռ (2157 մ) Արարատի մարզում, Լուսաշող գյուղից 0,5 կմ հվ.:

ԱՌՑՈՒՄ - լեռնագագաթ (1921 մ) Լոռու մարզում, Վիրահայոց լեռների համակարգում, Ուռուտ գետի աջափնյակում, Մեղովկա գյուղից 1,5 կմ արլ.:

ԱՌՑՈՒՄԱՀԱՆԴ - հանդ Սյունիքի մարզում, Բարգուշատի լեռնահամակարգում, Քարակիտուկձոր գետի ձախափնյակում, Կաղնուտ գյուղից 1 կմ հս.:

ԱՌՑՈՒՄԱՍԱՐ - լեռնագագաթ (2984 մ) Լոռու և Շիրակի մարզերի սահմանագլխին, Ջավախքի լեռների առանցքային գոտում, Սարագյուղից 8 կմ հվ-արլ.:

ԱՌՆԵՏ - հանդ Վայոց ձորի մարզում, Վայքի լեռների հս. լանջերին, Խաչիկ գյուղից 3,5 կմ հս-արմ.:

ԱՌՎԱԿՆ - գետակ Գեղարքունիքի մարզում, Գայլաձոր գետի ձախ օժանդակը: Սկիզբ է առնում Վարդենիսի լեռներից և Վարդենյաց լեռնանցքից 2,5 կմ հս. միախառնվում մայր գետին: Երկարությունը՝ 6,5 կմ:

ԱՍԵՂԱՍԱՐ - լեռ (2483 մ) Գեղարքունիքի մարզում, Գեղամա լեռների հս-արլ. լանջին, Հայրավանք գյուղից 14,5 կմ հվ-արմ.:

ԱՍՆԻ - լեռ (1162 մ) Արարատի մարզում, Արմաշ գյուղից 1,5 կմ հս-արլ.:

ԱՍՏՈՆ ՃԱՍՓԱ - լեռ (2973 մ) ՀՀ Գեղարքունիքի մարզի և Ադրբեջանի սահմանագլխին, Սևանի լեռներում, Ըղձաձոր գետի աջափնյակում, Ջիլ գյուղից 4 կմ հս-արլ.:

ԱՍՏՂԱՋՈՐ - գետ Գեղարքունիքի մարզում: Սկիզբ է առնում Բացսար լեռան արմ. լանջից և Աստղաձոր գյուղից 2,5 կմ հս. թափվում Սևանա լիճ: Երկարությունը՝ 11 կմ (**Խաչաձոր**):

ԱՍՏՂԱՋՈՐ - գետ Սյունիքի մարզում: Սկիզբ է առնում Մեղրու լեռներից և Շվանիձոր գյուղից ներքև ձախից միախառնվում Արաքս գետին: Երկարությունը՝ 17 կմ (**Շվանիձոր**):

ԱՍՏՂՈՆՔ - լեռնագագաթ (3470 մ) Գեղարքունիքի մարզում, Վարդենիսի լեռների կենտրոնական մասում, Աստղաձոր գետի վերնագավառում:

ԱՎԱԳ - լեռնագագաթ (2322 մ) Տավուշի մարզում, Իջևանի լեռների համակարգում, Խաչաղբյուր գետի աջափնյակում, Ենոքավան գյուղից 11 կմ հվ-արմ.:

ԱՎԱԳԻՍԱՐ - լեռնագագաթ (1867 մ) Լոռու մարզում, Վիրահայոց լեռների արմ. մասում, Մեծավան գյուղից 2 կմ հս-արլ.:

ԱՎԱԶԱՂԲՅՈՒՐ - աղբյուր Վայոց ձորի մարզում, Վայոցսարի հս-արլ. լանջին, Հերիեր գետի աջափնյակում, Կարմրաշեն գյուղից 2 կմ հվ-արմ.:

ԱՎԱԶԱՆ - սարավանդ Մյունիքի մարզում, Մեղրու լեռների հվ-արլ. մասում, Թոնրագետի ձախափնյակում, Բարդութաղ լեռնագագաթից հվ.:

ԱՎԱԶՈՒՏ - լեռ (2368 մ) Մյունիքի մարզում, Ձանգեզուրի լեռնահամակարգի հս. մասում, Մապատաձոր գետի աջափնյակում, Թանահատ գյուղից 6 կմ հվ-արլ.:

ԱՎԱՆԱՔԱՐ - լեռ (1131 մ) Լոռու մարզում, Թումանյան և Քոբեր երկաթուղային կայարանների միջև, Դեբեդի աջափնյակում, Այգեհատ գյուղից 1,5 կմ հվ-արլ.:

ԱՎԱՆԻՍ - գետակ Գեղարքունիքի մարզում: Սկիզբ է առնում Արեգունի լեռների հվ-արմ. լանջերից և Շորժա գյուղի մոտ թափվում Սևանա լիճ: Երկարությունը՝ 6 կմ:

ԱՎԵՇ - գետակ Վայոց ձորի մարզում, Դումագետի աջ օժանդակը: Սկիզբ է առնում Վայքի լեռներից և Նախիջևանի տարածքում միախառնվում մայր գետին: Երկարությունը՝ 11 կմ, չձ տարածքում՝ 2,5 կմ:

ԱՎԵՐԱԿԻ ԴԱՐ - հանդ Գեղարքունիքի մարզում, Վարդենիս և Մելվազետակ գետերի ջրբաժանում, Վարդենիկ գյուղից 2 կմ հվ.:

ԱՎԵՐԱՋՈՒՐ - գետ Գեղարքունիքի մարզում, Սևանա լճի ավազանում, Զո-

լաքար գետի օժանդակը: Սկիզբ է առնում Վարդենիսի լեռների կենտրոնական մասի հս. լանջերից և Զուլաքար գյուղի հս. եզրում միախառնվում մայր գետին: Երկարությունը՝ 12 կմ:

ԱՎԶՆՈՑ - լեռնագագաթ (2770 մ) Շիրակի մարզում, Արագած լեռնազանգվածի հս. փեշերին, Արթիկի ջրանցքի աջ կողմում, Մեծ Մանթաշ գյուղից 7 կմ հվ-արլ.:

ԱՎՇԱՍԱՐ - լեռնագագաթ (2338 մ) ՀՀ Վայոց ձորի մարզի և Նախիջևանի սահմանագլխին, Վայքի լեռնահամակարգում, Խաչիկ գյուղից 2 կմ հվ-արլ.:

ԱՎՇԵՆ - լեռնագագաթ (2559 մ) Արագածոտնի և Լոռու մարզերի սահմանագլխին, Փամբակի լեռների արմ. մասում, Մպիտակի լեռնանցքից հվ-արլ., Ավշեն գյուղից 2 կմ հս.:

ԱՏԱՂԱՆԱՆԻ - հանդ Լոռու մարզում, Շիկաքար լեռան արլ. լանջին, Դեբեդ գետի ձախափնյակում, Բենդիկ գյուղից 2,5 կմ հվ.:

ԱՐԱԲԿԻՐ - քարանձավ Երևանի՝ համանուն համայնքի արմ. մասում, Հրազդան գետի ձախափնյակում:

ԱՐԱԲԿԻՐԻ ԴԱՐԱՎԱՆՈՒ - դարավանդ Երևանի՝ համանուն համայնքի հս. մասում:

ԱՐԱԳԱՍՏ - լեռնազանգված ՀՀ արմ. մասում, Արարատյան դաշտավայրի և Շիրակի սարահարթի, Ախուրյան և Քասաղ գետերի միջև: Հիմքը վահանաձև, կարճ կորածալք է, ծածկված է նոր և նորագույն հրաբխային արտալիժումների լավաներով ու տուֆերով: Պասկված է չորս զագաթներով, որոնցից հս-ը՝ ամենաբարձր կետն է հանրապետությունում (4090 մ): Հարաբերական բարձրությունը Արարատյան դաշտավայրիցից շուրջ 3000 մ, իսկ Շիրակի սարահարթից՝ 2500 մ:

ԱՐԱԳԱՍՏԻ ԱՂՊՅԱՆ ԱՐԳԵԼԱՎԱՅՐ - արգելավայր Արագածոտնի մարզում,

Արագածի լեռնագանգվածում: Հիմնադրվել է 1959 թ., տարածքը՝ 300 հա: **ԱՐԱԳԱՍՏՈՏՆ** - գետ Արագածոտնի մարզում, Նիգատուն գետի աջ օժանդակը: Սկիզբ է առնում Արագած լեռան հվ-արլ. լանջերից և Լուսաբլրյուր գյուղում աջից միախառնվում մայր գետին: Երկարությունը՝ 10 կմ:

ԱՐԱԳԵՏ - գետ Արագածոտնի և Կոտայքի մարզերում, Հրազդան գետի աջ օժանդակը: Սկիզբ է առնում Ծաղկունյաց լեռների արմ. լանջերից և Քարաշամբ գյուղի մոտ միախառնվում է մայր գետին: Երկարությունը՝ 17 կմ (**Չալիձոր**):

ԱՐԱԳԻԼԻՋՈՒՐ - գետ Սյունիքի մարզում: Սկիզբ է առնում Ջանգեզուրի լեռների կենտրոնական մասից և Շաղատ գյուղից 0,5 կմ հս. աջից միախառնվում Որոտանին: Երկարությունը՝ 16 կմ:

ԱՐԱՐԻՆ - լեռնագագաթ (3072 մ) ՀՀ Սյունիքի մարզի և Նախիջևանի սահմանագլխին, Ջանգեզուրի լեռների կատարային մասում, Սիսիան գետի վերնագավառում, Արևիս գյուղից 10 կմ հվ-արմ.:

ԱՐԱՍՈՆ ԴԱՇՏ - դաշտ Արարատի մարզում, տե՛ս **Ուրծաղաշտ**:

ԱՐԱՍՈՆ ԿԻՐՃ - կիրճ Արարատի մարզում, Արածոգետի խորը հովիտը Ուրծի լեռների հվ-արլ. մասում:

ԱՐԱՍՈՆԳԵՏ - գետ Արարատի մարզում: Սկիզբ է առնում Մժկատար լեռների հվ. լանջերից և Նախիջևանի սահմաններում ձախից միախառնվում Արաքսին: Երկարությունը՝ 42 կմ:

ԱՐԱՍՄԱԶԴ - լեռնագագաթ (3399 մ) Սյունիքի մարզում, ամենաբարձրը Բարգուշատի լեռներում, Քարուտ գյուղից 8 կմ հս-արլ.:

ԱՐԱՍՄԱԶԴ - լեռնանցք (2717 մ) Սյունիքի մարզում, Բարգուշատի լեռներում, Տաթև գետի հովտից դեպի Գիրա-

թաղ գետի հովիտը, Վերին Գեղավանք գյուղից 5,5 կմ հս-արլ.:

ԱՐԱՍՄԱԶԴ - գետ Սյունիքի մարզում: Սկիզբ է առնում համանուն լեռան հվ. լանջերից և Գեղի գյուղի մոտ ձախից միախառնվում Գեղի գետին: Երկարությունը՝ 12 կմ:

ԱՐԱՍՈՒՄԻ ԴԻՔ - բլուր (1497,3 մ) Կոտայքի մարզում, Արամուս գյուղի արմ. եզրին:

ԱՐԱՅԻ - լեռնագագաթ (2605 մ) Արագածոտնի և Կոտայքի մարզերի սահմանագլխին, Արագած լեռնագանգվածից հվ-արլ., Քասաղ և Հրազդան գետերի միջև (**Շաղկեվանք**):

ԱՐԱՊԱՐ - բլուր (1382 մ) Արագածոտնի և Կոտայքի մարզերի սահմանագլխին, Քասաղ գետի ձախափնյակում, Նոր Երզնկա գյուղից 2,5 կմ հվ-արլ.:

ԱՐԱՍԱՐ - լեռ (1239 մ) Արարատի մարզի և Նախիջևանի սահմանագլխին, Արածոգետի աջափնյակում, Պարույր Սևակ գյուղից 3 կմ հվ-արմ.:

ԱՐԱՏԵՍ - գետ Վայոց ձորի մարզում: Սկիզբ է առնում Վարդենիսի լեռներից և Շաղիկ գյուղից հս. աջից միախառնվում Երկայնարտ գետին: Երկարությունը՝ 12 կմ:

ԱՐԱՐԱՏ - հանդ Սյունիքի մարզում, Ջանգեզուրի լեռնահամակարգում, Մավվարդ գյուղից 7 կմ հս-արմ.:

ԱՐԱՐԱՏՅԱՆ ԳՈԳՍՎՈՐՈՒԹՅՈՒՆ - գոգավորություն Հայկական լեռնաշխարհում, Արաքս գետի միջին հոսանքի շրջանում: ՀՀ-ի տարածքում իր մեջ է ներառում Արագածոտնի, Արարատի և Արմավիրի մարզերի մի մասը: Բարձրությունը՝ 800-1000 մ:

ԱՐԱՐԱՏՅԱՆ ԴԱՇՏՎԱՅՐ - Արարատյան գոգավորության տափարակ հատակը, բարձրությունը ծովի մակարդակից՝ 800-1200 մ: Ձգված է հս-արմ. հվ-արլ. ուղղությամբ Արաքս գե-

տի հոսանքի երկայնքով: ՀՀ-ին է պատկանում ձախափնյա մասը:

ԱՐԱՔՍ - գետ, սկիզբ է առնում Արևմտյան Հայաստանի Բյուրական լեռների Սերմանց գագաթից: Ախուրյանն ընդունելուց հետո սահմանային գետ է ՀՀ և Թուրքիայի, Նախիջևանի և Իրանի, ՀՀ և Իրանի, ԼՂՀ-ի և Իրանի, ապա նաև Ադրբեջանի և Իրանի միջև: Ստորին հոսանքն անցնում է Ադրբեջանով և Սաբիրաբադ քաղաքի մոտ միախառնվում է Կուրին: Երկարությունը՝ 1072 կմ (**Երասխա**):

ԱՐԳԵԼԱՉՈՐ - գետ Սյունիքի մարզում, Սյունիքի բարձրավանդակում, Որոտանի ձախ օժանդակը: Սկիզբ է առնում Ծղուկի լեռներից և Սառնակունք գյուղից 2 կմ հվ. միանում մայր գետին: Երկարությունը՝ 20 կմ:

ԱՐԳԵԼԱՍՍԱՐ - լեռնագագաթ (1288 մ) Տավուշի մարզում, Տավուշի լեռնահամակարգում, Մոսեւգեղից 2,5 կմ հվ.:

ԱՐԳԻՃԻ - լեռնագագաթ (2328 մ) Գեղարքունիքի մարզում, Արեգունի լեռներում, Աղբերք գյուղից 2,5 կմ հս-արմ.:

ԱՐԳԻՃԻ - գետ Գեղարքունիքի մարզում: Սկիզբ է առնում Գնդասար լեռան հս-արլ. լանջից և Ներքին Գետաշեն գյուղից ներքև թափվում Սևանա լիճ: Երկարությունը՝ 51 կմ:

ԱՐԴԱՐ ԴԱՎԻԹ - բլուր (1025,4 մ) Արմավիրի մարզում, Վաղարշապատի տարածաշրջանում, Այգեշատ գյուղի արլ. եզրին:

ԱՐԴԵՆՅԱՑ - լեռ (2102 մ) Շիրակի մարզում, Զավխաքի սարահարթում, Ախուրյան գետի ձախափնյակում, Արդենիս գյուղից 1 կմ արմ.:

ԱՐԴԵՉ - լեռնագագաթ (2351 մ) Վայոց ձորի մարզում, Վայքի լեռների ճյուղավորություններում, Արփա գետի ձախափնյակում, Գնիշիկ գյուղից 3 կմ հս.:

ԱՐԴԵՉ - գետակ Վայոց ձորի մարզում, Արփա գետի ձախ օժանդակը: Սկիզբ է առնում համանուն լեռան հս. լանջից բխող՝ Մեծակունք աղբյուրից և Արփի գյուղի հվ. մասում միանում մայր գետին: Երկարությունը՝ 6 կմ:

ԱՐԴԻԿ - բլուր (1713 մ) Շիրակի մարզում, Արագածի լեռնազանգվածի հս-արմ. ստորոտին, Շիրակի սարահարթի արլ. մասում, Արթիկ քաղաքից 1,5 կմ հս-արմ.:

ԱՐԵԳ - լեռնագագաթ (1667 մ) Արագածոտնի մարզում, Արագած լեռնազանգվածի հվ-արմ. լանջին, Թաթուլ գյուղից 1 կմ հվ-արմ.:

ԱՐԵԳ - հանդ Արագածոտնի մարզում, Թեժառույզի լեռների հվ. լանջերին, Արուճաջուր գետի աջափնյակում:

ԱՐԵԳԱԳԵՏ - գետակ Շիրակի մարզում, Եղնաջուր գետի ձախ օժանդակը: Սկիզբ է առնում Զարիշատի լեռների հվ. լանջերից և Գառնաթիճ գյուղի հս. մասում միախառնվում մայր գետին: Երկարությունը՝ 8 կմ:

ԱՐԵԳՂԵՄ - լեռնագագաթ (2141 մ) Գեղարքունիքի մարզում, Սևանի լեռնահամակարգում, Սևանա լճի ափամերձ գոտում, Շորժա գյուղից 1 կմ հս.:

ԱՐԵԳԻ - լեռնագագաթ (2463 մ) Շիրակի մարզում, Եղնախաղի լեռների արլ. լանջին, Եղնաջուր գյուղից 1,5 կմ հս-արմ.:

ԱՐԵԳԻ - հանդ Վայոց ձորի մարզում, Գնիշիկ գետի աջափնյակում, Արենի գյուղից 5 կմ հվ-արլ.:

ԱՐԵԳԻՆ - լեռնագագաթ (2423 մ) Գեղարքունիքի մարզում, Արեգունի լեռների կենտրոնական մասում, Արտանիշ գյուղից 1,5 կմ հս.:

ԱՐԵԳԻՆ - լեռնագագաթ (2842 մ) Գեղարքունիքի մարզում, Վարդենիսի լեռնահամակարգում, Վարդենիս գետի աջափնյակում, Վարդենիկ գյուղից 8 կմ հվ-արլ.:

ԱՐԵՔՆԱԲԼՈՒՐ - բլուր (747 մ) Տավուշի մարզում, Պապաքարի լեռների կենտրոնական հատվածում, Հաղթանակ գյուղից 4 կմ հս-արմ.:

ԱՐԵՔՆԱԿՈՂ - լեռ (1900 մ) Սյունիքի մարզում, Ջանգեզուրի լեռնահամակարգի հս. մասում, Տոլոբուի ջրամբարից արմ., Բոնակոթ գյուղից 2 կմ հվ-արլ.:

ԱՐԵՔՆԻՄ - լեռ (1812 մ) Շիրակի մարզում, Արագածի լեռնազանգվածի հս. փեշերին, Մեղրաշեն գյուղից 2 կմ արլ.:

ԱՐԵՔՈՒՆԻ - գետակ Գեղարքունիքի մարզում: Սկիզբ է առնում Սևանի լեռներից և Արեգունի գյուղից ներքև թափվում Սևանա լիճ: Երկարությունը՝ 8 կմ (**Մատանախաչ**):

ԱՐԵՔՈՒՆԻ - հանդ Գեղարքունիքի մարզում, Արեգին լեռան հվ. լանջերին, Վարդենիս գետի աջափնյակում, Վարդենիկ գյուղից 10 կմ հվ-արլ.:

ԱՐԵՔՈՒՆԻ - լեռնագագաթ (2246 մ) Վայոց ձորի մարզում, Քարկատար լեռների արլ. ճյուղավորություններում, Հորս գյուղից 2 կմ հվ.:

ԱՐԵՔՈՒՆԻ ԼԵՌՆԵՐ - Փամբակի լեռների հվ-արլ. շարունակությունը՝ Սևանի լեռնանցքից հվ-արլ. մինչև Քաշաթաղ գագաթը 56 կմ երկարությամբ, եզերում է Սևանա լիճը հս-արլ. կողմից: Առավելագույն բարձրությունը՝ 2740 մ:

ԱՐԵՎԱԲԵՐ - լեռնագագաթ (2191 մ) Վայոց ձորի մարզում, Վայքի լեռների կատարային մասում, Փոռ գյուղից 3,5 կմ հվ-արմ.:

ԱՐԵՎԱԲՈՅԼ - լեռնագագաթ (1141 մ) Սյունիքի մարզում, Բարգուշատի լեռնահամակարգում, Կոտակ գետի ձախափնյակում, Բարգուշատ գյուղից 1 կմ արլ.:

ԱՐԵՎԱՋՈՒՐ - աղբյուր Գեղարքունիքի մարզում, Աղաքար գետի աջափ-

նյակում, Ճամբարակ քաղաքից 3,5 կմ հվ-արմ.:

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՅՐԻՔԱՐ - լեռնագագաթ (2767մ) Տավուշի մարզում, Գուգարաց լեռներում, Դիլիջան քաղաքից 7 կմ հս-արմ.:

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՄԵՎԱՆԻ ԼԵՌՆԵՐ - լեռներ ՀՀ Գեղարքունիքի և ԼՂՀ-ի սահմանագլխին, Փոքր Կովկասի լեռնաձյուղը Սևանա լճի և Թարթառ գետի վերին հոսանքի միջև: Սևանի լեռներից հվ-արմ. ուղղությամբ ձրգվում է մինչև Մեծ Ծարասարի լեռնահանգույցը շուրջ 40 կմ երկարությամբ: Առավելագույն բարձրությունը՝ 3441 մ:

ԱՐԵՎԻՔԻ ԼԵՌՆԵՐ - լեռներ Սյունիքի մարզում, տե՛ս **Մեղրու լեռներ**:

ԱՐԵՎԿԱ - հանդ Վայոց ձորի մարզում, Վայքի լեռների հս. լանջերին, Գրավ գետի ձախափնյակում, Գնիշիկ գյուղից 2,5 կմ արլ.:

ԱՐԵՎԿՈՂ - լեռնագագաթ (1589 մ) Լոռու մարզում, Բագումի լեռնահամակարգում, Փամբակ գետի աջափնյակում, Դարպաս գյուղից 1 կմ արմ.:

ԱՐԵՎԿՈՂ - լեռ (1813 մ) Սյունիքի մարզում, Ջանգեզուրի լեռնահամակարգի հս. մասում, Սիսիան գետի ձախափնյակում, Տոլոբս գյուղից 2 կմ հս-արլ.:

ԱՐԵՎՄՏՅԱՆ ԱՅՐԻՔԱՐ - լեռնագագաթ (2781 մ) Լոռու և Տավուշի մարզերի սահմանագլխին, Գուգարաց լեռներում, Դիլիջան քաղաքից 7,5 կմ հս-արմ.:

ԱՐԵՎՄՏՅԱՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԲԱՐՁՐԱՎԱՆԿԱՍ - բարձրավանդակ Փոքր Կովկասում, տե՛ս **Սյունիքի բարձրավանդակ**:

ԱՐԵՎՇԱՍ - հանդ ՀՀ Սյունիքի մարզի և ԼՂՀ-ի սահմանագլխին, Բարգուշատի լեռնահամակարգում, Քաշունի գետի ձախափնյակում, Վանանդ գյուղից 1 կմ հս-արլ.:

ԱՐԵՎՈՏՁՈՐ - գետակ Շիրակի մարզում, Եղնաջուր գետի աջ օժանդակը: Սկիզբ է առնում Եղնախաղի լեռների լանջերից և Եղնաջուր գյուղից 2 կմ արև. միախառնվում մայր գետին: Երկարությունը՝ 8 կմ:

ԱՐՁԱԿԱՆ - լեռնագագաթ (2502 մ) Կոտայքի մարզում, Թեղենյաց լեռների հվ. մասում, Արզական գյուղից 4 կմ հս. արև.:

ԱՐՁԱԿԱՆ-ՄԵՂՐԱՋՈՐԻ ԱՐԳԵԼԱՎԱՅՐ - արգելավայր Կոտայքի մարզում, Ծաղկունյաց լեռների արլ. լանջերին: Հիմնադրվել է 1971թ., տարածքը՝ 14500 հա:

ԱՐՁԻՆ-ՇԱՄԻՐԱՄԻ ՋՐԱՆՑՔ - հանված է Հրազդան գետից, նրա աջ ափից: Երկարությունը՝ 92 կմ: Ոռոգում է Արարատի, Կոտայքի և մասամբ Արմավիրի մարզերի հողերը:

ԱՐՁՆՈՒ ՋՐԱՆՑՔ - ջրանցք Կոտայքի մարզում, Արզնի գյուղի մոտ: Հանված է Հրազդան գետի ձախ ափից: Ոռոգում է Կոտայքի մարզի հողերը: Երկարությունը՝ 8 կմ:

ԱՐԹԻԿԻ ՋՐԱՆՑՔ - ջրանցք Շիրակի մարզում: Վերցված է Գեղաձոր գետի ձախ ափից և ոռոգում է Շիրակի մարզի հողերը: Երկարությունը՝ 7 կմ:

ԱՐԹԻԿԻՋՈՒՐ - գետ Շիրակի մարզում: Սկիզբ է առնում Արագած լեռան հս. արև. լանջերից և անցնելով Արթիկ քաղաքի միջով, ձախից միախառնվելով Մանթաշ գետին կազմավորում է Կարկաչան գետը: Երկարությունը՝ 26 կմ:

ԱՐԻՆ-ԲԵՐԴ - բլուր-հնավայր (1071 մ), ուրարտական Էրեբունի քաղաքատեղին՝ Երևանի հվ. արլ. մասում՝ Էրեբունի համայնքի տարածքում:

ԱՐՄԱԹԱԳԵՏ - գետ ՀՀ Շիրակի մարզի և Թուրքիայի սահմանագլխին: Սկիզբ է առնում Եղնախաղի լեռների հվ. փեշերից և Երազգավորս գյուղից

արմ. ձախից միախառնվում Սևգետին: Երկարությունը՝ 16 կմ:

ԱՐՄԱԹԱՂԲԵՐՔ - գետ Գեղարքունիքի մարզում: Սկիզբ է առնում Արեգունի լեռների Կարկտասար գագաթի հվ. արլ. լանջերից և թափվում Մևանա լիճ: Երկարությունը՝ 12 կմ (**Մայխասկաղբյուր**):

ԱՐՄԱԹԱՍԱՐ - լեռնագագաթ (2827 մ) Վայոց ձորի մարզում, Ամուլսարի լեռներում, Դարբ գետի վերնագավառում, Արտավան գյուղից 8 կմ արլ.:

ԱՐՄԱԹԻ - լեռնագագաթ (3341մ) Սյունիքի մարզում, Ջանգեզուրի լեռներում, Կարդ գյուղից 5 կմ արև.:

ԱՐՄԱԹԻ - լեռ (2166 մ) Սյունիքի մարզում, Ջանգեզուրի լեռնահամակարգի հս. մասում, Անգեղակոթի ջրամբարից 3,5 կմ արլ., Մուցք գյուղից 3 կմ արլ.:

ԱՐԾՎԱՆԻԿ - գետ Սյունիքի մարզում, Ողջի գետի ձախ օժանդակը: Սկիզբ է առնում Բարգուշատի լեռների հվ. լանջերից և Կապան քաղաքից 3 կմ արլ. միախառնվում մայր գետին: Երկարությունը՝ 17 կմ:

ԱՐԾՎԱՆԻՍ - հանդ Գեղարքունիքի և Տավուշի մարզերի սահմանագլխին, Թաղիքասար լեռան հվ. արլ. լանջերին, Անտառատեջ գյուղից 2 կմ հվ. արև.:

ԱՐԾՎԱՇԵՆԻ ՋՐԱՄԲԱՐ - ջրամբար Գեղարքունիքի մարզում, Արծվաշեն գյուղից 0,5 կմ հվ. արլ., ծովի մակարդակից 1381 մ բարձրության վրա: Ջրի ծավալը՝ 2,0 մլն մ³:

ԱՐԾՎԱՔԱՐ - հրվանդան Գեղարքունիքի մարզում, Մևանա լճի Նորատուսի թերակղզում:

ԱՐՄԱՂԱՆ - լեռ (2829 մ) Գեղարքունիքի մարզում, Գեղամա լեռների հվ. արլ. փեշերին, Մաղինա գյուղից 3 կմ արմ.:

ԱՐՄԱՎԻՐԻ ԲԼՈՒՐ - բարձունք (937 մ) Արմավիրի մարզում, Արմավիր գյու-

ղից 1 կմ արմ. (**Մարդարապատի բլուր, Դավթի բլուր**):

ԱՐՄՍՎԻՐԻ ԴՄՇՏ - դաշտ Արմավիրի մարզում, Արարատյան դաշտավայրի արմ. հատվածը, ընդգրկում է մարզի հվ. մասը (**Մարդարապատի տափաստան, Հոկտեմբերյանի տափաստան**):

ԱՐՄՍՎԻՐԻ ՋՐԱՆՑՔ - ջրանցք, հանված է Արաքս գետից: Երկարությունը՝ 46 կմ: Ոռոգում է Արմավիրի մարզի հողերը:

ԱՐՄԻԿ - գետ Արարատի մարզում: Սկիզբ է առնում Տասանորդի լեռների հս. լանջերից և ձախից միախառնըվում Վեդի գետին: Երկարությունը՝ 10 կմ:

ԱՐԱՁՈՐ - գետակ Գեղարքունիքի մարզում, Քարահանի ջուր գետակի օժանդակը: Սկիզբ է առնում Արծվաշեն գյուղի և Աղբբեջանի սահմանագրվից և գյուղից 0,5 կմ հս-արմ. միախառնվում մայր գետին: Երկարությունը՝ 3 կմ:

ԱՐՇԱԿԻ - հանդ Գեղարքունիքի և Տավուշի մարզերի սահմանագլխին, Ձկնագետի աջափնյակում, Սեմյոնովկա գյուղից 6 կմ արմ.:

ԱՐՇԱԿԻ ՍԱՐ - լեռնագագաթ (1703 մ) Տավուշի մարզում, Վարազի լեռներում, Խաշթառակ գյուղից 6 կմ արլ.:

ԱՐՇԱԿԻՍԱՐ - լեռնագագաթ (1698 մ) Լոռու մարզում, Վիրահայոց լեռների համակարգում, Նորաշեն գետի աջ կողմում, Ձորամուտ գյուղից 1,5 կմ հվ-արլ.:

ԱՐՈՍԱԳԵՏ - գետակ Տավուշի մարզում, Խաչաղբյուր գետի աջ օժանդակը: Սկիզբ է առնում Իջևանի լեռների հս. լանջերից և Հաղարծին գյուղից 9 կմ հս. միախառնվում մայր գետին: Երկարությունը՝ 6 կմ:

ԱՐՈՏԱՍԱՐ - լեռնագագաթ (2653 մ) Լոռու մարզում, Գոգարանց լեռներում, Ուրասար գյուղից 7,5 կմ հվ-արմ.:

ԱՐՈՐԱԿ - լեռնագագաթ (2107 մ) Սյունիքի մարզում, Սյունիքի բարձրավանդակում, Սպանդարյան գյուղից 3 կմ հվ-արլ.:

ԱՐՁԱԳՆՈՒՄ - լեռնագագաթ (1911 մ) Լոռու մարզում, Գուգարաց լեռներում, Ծաղկաշատ գյուղից 3 կմ հս-արլ.:

ԱՐՁԱՀԱՆՆ - հանդ Սյունիքի մարզում, Նախրատափ լեռան արլ. լանջին, Վերիգետի աջափնյակում, Մալվարդ գյուղից 2 կմ արմ.:

ԱՐՁԱՀՈՒՆ - գետակ Սյունիքի մարզում, Բաղացջրի աջ օժանդակը: Գոյանում է Մոխրագետի և Միջնագետի միացումից և Լեռնածոր գյուղից 7 կմ արլ. միախառնվում մայր գետին: Երկարությունը՝ 5 կմ:

ԱՐՁԱԴԲՅՈՐ - աղբյուր Տավուշի մարզում, Կենաց լեռների լանջերին, Տավուշ գետի ձախափնյակում, Տավուշ գյուղից 2 կմ արմ.:

ԱՐՁԱՆՈՑ - լեռնագագաթ (2385 մ) Գեղարքունիքի մարզում, Արջանցի լեռներում, Սևան քաղաքի Գոմածոր թաղամասից 1 կմ հս.:

ԱՐՁԱՆՈՑԻ ԼԵՌՆԵՐ - լեռներ Գեղարքունիքի մարզում, Փամբակի լեռների արլ. ճյուղավորությունը, ձգվում է Ուղեռ գագաթից՝ Ձկնագետի աջ ափով մինչև Ցամաքաբերդի թերակըղզին շուրջ 16 կմ երկարությամբ: Ամենաբարձր գագաթը համանուն լեռն է (2385 մ):

ԱՐՁԱՍԱՐ - լեռնագագաթ (1819 մ) Լոռու մարզում, Բագումի լեռների համակարգում, Պուշկինո գյուղից 2,5 կմ հս-արմ.:

ԱՐՁԱՏՈՒԼԵՆՈՒ ԱՐԳԵԼԱՎԱՅՐ - արգելավայր Տավուշի մարզում, Իջևանի լեռների արլ. լանջերին, Աղստև գետի ձախափնյակում, Իջևան քաղաքից արմ.։ Հիմնադրվել է 1958 թ., տարածքը՝ 40 հա:

ԱՐՋԱՔԱՐ - հանդ Տավուշի մարզում, Տավուշի լեռների լանջերին, Տավուշ գետի աջափնյակում, Բերդ քաղաքից 2,5 կմ հվ-արլ.:

ԱՐՋԱՔԱՐԻ ԼԵՌՆԵՐ - լեռներ Գեղարքունիքի մարզում, Արտանիշի թերակղզու հվ-արլ. մասում, ձգվում է Սևանա լճի ափամերձ գոտում: Ամենաբարձր գագաթը՝ Խորածոր լեռը (2127 մ): Երկարությունը՝ 3 կմ:

ԱՐՋԻ ԾՄԱԿ - հանդ Սյունիքի մարզում, Մեղրու լեռնահամակարգում, Մասրուց գետի ձախափնյակում, Շիշկերտ գյուղից 1,5 կմ հվ.:

ԱՐՋԻԳՎՈՒՄ - լեռնագագաթ (2229 մ) Սյունիքի մարզում, Մեղրու լեռնահամակարգում, Շիշկերտ գետի աջափնյակում, Շիշկերտ գյուղից 1 կմ հվ-արլ.:

ԱՐՋԻՄԱՐ - լեռնագագաթ (2610 մ) Վայոց ձորի մարզում, Զանգեզուրի լեռների հս. մասում, Արփա գետի ձախափնյակում, Ջերմուկ քաղաքից 2,5 կմ հս-արլ.:

ԱՐՋՈՒԹԱԹ - լեռնագագաթ (2096 մ) Արագածոտնի մարզում, Արագածի լեռնահամակարգի հվ-արլ. մասում, Նիգատուն գյուղից 1,5 կմ արմ.:

ԱՐՋՈՒՏԻ ԼԵՌՆԱՆՅՔ - լեռնանցք (2252 մ) Բագումի լեռների արլ. մասում, Արջուտ գյուղից 2,5 կմ հս-արմ.:

ԱՐՄԱՐ - լեռնագագաթ (1860 մ) ՀՀ Գեղարքունիքի մարզի և Ադրբեջանի սահմանագլխին, Միափորի լեռնահամակարգում, Խաչիձոր գետակի ակունքի մոտ, Արծվաշեն գյուղից 3,5 կմ հվ-արմ.:

ԱՐՄԱՐ - լեռնագագաթ (1862 մ) Տավուշի մարզում, Վարագի լեռներում, Լուսահովիտ գյուղից 3 կմ արլ.:

ԱՐՏԱԲՈՒՆ - գետ Վայոց ձորի մարզում: Սկիզբ է առնում Վարդենիսի լեռների հվ. լանջերից և Շատին գյուղից

վերև աջից միախառնվում Եղեգիսին: Երկարությունը՝ 18 կմ:

ԱՐՏԱԳԵՏ - գետակ Լոռու մարզում: Սկիզբ է առնում Փամբակի լեռներից և Հարթագյուղի մոտ աջից միախառնվում Փամբակին: Երկարությունը՝ 7 կմ:

ԱՐՏԱՆԻՇ - լեռնագագաթ (2461 մ) Գեղարքունիքի մարզում, համանուն թերակղզու վրա, Արտանիշ գյուղից 4 կմ հվ-արմ.:

ԱՐՏԱՆԻՇ - լիճ Գեղարքունիքի մարզում, համանուն գյուղի մոտ, ծովի մակարդակից 1905 մ բարձրության վրա: Մակերեսը՝ 0,4 կմ²:

ԱՐՏԱՆԻՇ - գետ Գեղարքունիքի մարզում, տե՛ս **Արտունջ**:

ԱՐՏԱՆԻՇԻ ԹԵՐԱԿՂԶԻ - թերակղզի Գեղարքունիքի մարզում, Սևանա լճի հս-արլ. մասում, Արտանիշի և Խորժայի ծոցերի միջև: Մակերեսը՝ 25 կմ²:

ԱՐՏԱՆԻՇԻ ԾՈՑ - ծոց Սեծ Սևանի հս-արլ. անկյունում, Արտանիշի թերակղզուց արլ: Այստեղ է թափվում Արտունջ գետը:

ԱՐՏԱՇԱՏԻ ՋՐԱՆՅՔ - հանված է Հրազդան գետից՝ նրա ձախ ափից: Երկարությունը 61 կմ: Ռոզգում է Արարատի մարզի և Երևանի մերձքաղաքային հողերը:

ԱՐՏԱՊԱՆ - լեռնագագաթ ՀՀ Սյունիքի մարզի և Նախիջևանի սահմանագլխին, տե՛ս **Միսկատաք**:

ԱՐՏԱՄԱՐ - լեռնագագաթ (2199 մ) Սյունիքի մարզում, Մեղրու լեռնահամակարգում, Շիշկերտ գետի աջափնյակում, Շիշկերտ գյուղից 2 կմ հվ-արլ.:

ԱՐՏԱՎԱԶ - լեռնագագաթ (2929 մ) Կոտայքի մարզում, Փամբակի լեռների հվ. լանջին, Արտավազ գյուղից 4 կմ հս-արլ.:

ԱՐՏԱՎԱԶ - գետակ Կոտայքի մարզում, Մարմարիկի օժանդակը: Սկիզբ է

առնում համանուն լեռան արմ. լանջից և թափվում Մարմարիկ գետը: Երկարությունը՝ 5 կմ:

ԱՐՏԱՎԱԶԴ - լեռնագագաթ (2452 մ) Կոտայքի մարզում, Թեղենյաց լեռներում, Արզական գյուղից 3,5 կմ հս-արմ.:

ԱՐՏԱՎԱՆ - գետ Վայոց ձորի մարզում: Սկիզբ է առնում Չանգեզուրի և Վայքի լեռների հանգուցատեղից և Գետիկվանք գյուղի մոտ ձախից միախառնվում Դարբ գետին: Երկարությունը՝ 19 կմ:

ԱՐՏԻՆ - լեռնագագաթ Արագածոտնի մարզում, տե՛ս **Մեծ Արտենի**:

ԱՐՏԻՉՈՒՐ - գետակ Գեղարքունիքի մարզում, Կաղնուտ գետի օժանդակը: Սկիզբ է առնում Կորնետ լեռան հս. լանջին գտնվող Վարարաղբյուրից և Վարդանիքար լեռան արմ. փեշերին միախառնվում մայր գետին: Երկարությունը՝ 1,5 կմ:

ԱՐՏՈՆԱԶ - գետ Գեղարքունիքի մարզում: Սկիզբ է առնում Արեգունի լեռներից և թափվում Սևանա լճի Արտանիշի ձոցը: Երկարությունը՝ 10 կմ (**Արտանիշ**):

ԱՐՈՒՃԱԶՈՒՐ - գետ Արագածոտնի մարզում: Սկիզբ է առնում Արագած լեռան հվ. լանջերից և Շամիրամ գյուղի մոտ միախառնվում Շամիրամի սելավի հունին: Երկարությունը՝ 24 կմ:

ԱՐՓԱ - նախկինում լիճ Շիրակի մարզում, տե՛ս **Արփի լճի ջրամբար**:

ԱՐՓԱ - գետ Վայոց ձորի մարզում, Արաքսի ձախ վտակը: Սկիզբ է առնում Թեքսարի լեռներից: Արաքսի մեջ է թափվում Նախիջևանի սահմաններում: Երկարությունը՝ 128 կմ:

ԱՐՓԱՆԵԱՆ - լեռնագագաթ (2532 մ) Գեղարքունիքի մարզում, Սևանի լեռնահամակարգում, Զիլ գետի միջին հոսանքի ձախափնյակում, Զիլ գյուղից 2 կմ արլ.:

ԱՐՓԱ-ՄԵՎԱՆ ՋՐԱՏԱՐ (ԹՈՒՆԵՆ) - Սևանա լճի մակարդակը առավել բարձր նիշի վրա պահպանելու նպատակով Արփա գետի՝ մասամբ նաև Եղեգիս գետի ջրերը Վարդենիսի լեռների տակով Սևանա լիճ տեղափոխող հիդրոտեխնիկական կառույց: Երկարությունը՝ 48,3 կմ: Բաղկացած է երկու հատվածից՝ Արփա գետ - Եղեգիս գետ (18,7 կմ) և Եղեգիս գետ - Սևանա լիճ (29,6 կմ):

ԱՐՓԻ ԼՃԻ ՋՐԱՏԲԱՐ - նախկինում լիճ Շիրակի մարզում, Աշոցքի սարահարթում, 1950-ից վերածվել է ջրամբարի: Մինչև ջրամբար դառնալը մակերեսը եղել է 20,6 կմ², խորությունը՝ 1,6 մ, ծավալը՝ 3 մլն մ³ (**Արփա**):

ԱՐՔԱՅԱՆԻՍ - լեռնագագաթ (1691 մ) Լոռու մարզում, Վիրահայոց լեռների համակարգում, Ալավերդի քաղաքից 5 կմ հս.:

ԱՐՔԱՅԱՆԻՍ - հանդ Սյունիքի մարզում, Չանգեզուրի լեռնահամակարգում, Մարվաղ լեռան հվ. լանջին, Արևիս գյուղից 4,5 կմ հս-արմ.:

ԱՐՔԱՅԻՑ - լեռնագագաթ (2446 մ) Գեղարքունիքի մարզում, Սևանի լեռնահամակարգում, Կաղամբաջուր և Սշակաց գետերի ջրբաժանում, Ճամբարակ քաղաքից 5 կմ հվ.:

ԱՐՔԱՅԻՑ ԼԵՌ - լեռնագագաթ (2687 մ) Արագածոտնի և Կոտայքի մարզերի սահմանագլխին, Ծաղկունյաց լեռներում, որտեղից սկսվում է Մարմարիկի լեռները: Մարմարիկ գյուղից 12 կմ հվ-արմ.:

ԱՐՔԱՇԵՆ - գետ Արագածոտնի մարզում, Ամբերդ գետի ձախ օժանդակը: Սկիզբ է առնում Արագած լեռան հվ. լանջերից և Անտառուտ գյուղից 4 կմ հս-արմ. միախառնվում մայր գետին: Երկարությունը՝ 13 կմ:

ԱՐՔԱՇԵՆ - լեռ (2971 մ) Արարատի մարզում, Խաչերի լեռների հվ-արմ. մասում, Քաջառու և Խոսրով գետերի միջև:

ԱՐՔԱՇԵՆ - լեռնագագաթ Արարատի և Գեղարքունիքի մարզերի սահմանագլխին, տե՛ս **Ծաղկավեռ**:

ԱՐՔԱՇԵՆ - հանդ Լոռու մարզում, Հովանաձոր գետի ձախափնյակում, Օձուն գյուղից 3,5 կմ արմ.:

ԱՔԼՈՐԱՎԵՐ - լեռնագագաթ (2439 մ) Լոռու մարզում, Չքնաղի լեռների հվ. ճյուղավորություններում, Գոգարան գյուղից 3,5 կմ հս-արմ.:

ԱՔԼՈՐԱՔԱՐ - լեռ (2511 մ) Արագածոտնի մարզում, Քասաղ գետի ձախափնյակում, Մաղմոսավան գյուղից 4,5 կմ հս-արլ.:

Բ

ԲԱԳԱՍՈՆ - լեռնագագաթ (1252 մ) Արարատի մարզում, Գեղամա լեռների հվ-արմ. ճյուղավորություններում, Վեդի քաղաքից 3 կմ հս. (**Բագարսակ**):

ԲԱԳԱՐԱՆ - լեռ (1656 մ) Շիրակի մարզում, Շիրակի սարահարթում, Մարակապ գյուղից 3 կմ հվ.:

ԲԱԳԱՐՄԱԿ - լեռնագագաթ Արարատի մարզում, տե՛ս **Բագասուն**:

ԲԱԳՐԱՏԱՇԵՆԻ ՋՐԱՆՑՔ - ջրանցք Տավուշի մարզում, հանված է Դեբեդ գետի աջ ափից: Երկարությունը՝ 14 կմ: Ոռոգում է Տավուշի մարզի հողերը:

ԲԱԶ - հանդ Սյունիքի մարզում, Վարարակ գետի աջափնյակում, Քարահունջ գյուղից 1 կմ հվ.:

ԲԱԶԵՆՔԻԹ - լեռնագագաթ (1680 մ) Լոռու մարզում, Գուգարաց լեռներում, Թեղուտ գյուղից 4,5 կմ հվ-արմ.:

ԲԱԶԵՆԱՆԻ - հանդ Սյունիքի մարզում, Ծավ գետի ձախափնյակում, Ներքին Հանդ գյուղից 1,5 կմ հս-արմ.:

ԲԱԶԵՆՔ - լեռ (3222 մ) Սյունիքի մարզում, Սյունիքի բարձրավանդակում, Ծղռակ գյուղից 10 կմ հս.:

ԲԱԶՄԱԲԵՐԴ - գետ Արագածոտնի մարզում: Սկիզբ է առնում Արագած լեռան հվ-արմ. լանջերից և աջից միանում Շամիրամի սելավի հունին: Երկարությունը՝ 18 կմ:

ԲԱԶՄԱԼԻՃՔ - լիճ Կոտայքի մարզում, Գեղամա լեռների արմ. մասում, Սևաբերդ գյուղից 8 կմ հվ-արմ.: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 3066 մ, մակերեսը՝ 2 հա:

ԲԱԶՄԱՍՏԱԿ - գետակ Սյունիքի մարզում, Մավլարդ գետի օժանդակը: Սկիզբ է առնում Զանգեզուրի լեռներից: Երկարությունը՝ 6 կմ:

ԲԱԶՄԱՍՏԱԿ - գետ ՀՀ Սյունիքի մարզի և ԼՂՀ-ի տարածքում, Աղավնո գետի աջ օժանդակը: Սկիզբ է առնում Ներքին Խնձորեսկ գյուղի հս. մասից և ԼՂՀ-ի տարածքում միանում մայր գետին: Երկարությունը՝ 12 կմ:

ԲԱԶՄԱԿՆ - աղբյուրներ Արարատի մարզում, Ուղտուպարի լեռների հվ. լանջերին, Ուղտուակունք գետի ձախափնյակում:

ԲԱԶՄԱՂԲՅՈՒՐ - լեռ (1581 մ) Արագածոտնի մարզում, Արագածի լեռնահամակարգի հվ. մասում, Բազմաղբյուր գյուղից 2 կմ հս.:

ԲԱԶՈՒՄԹԱՆ - գետ Լոռու մարզում: Սկիզբ է առնում Բազումի լեռներից և Վանաձոր քաղաքից արմ. ձախից միախառնվում Փամբակին: Երկարությունը՝ 23 կմ:

ԲԱԶՈՒՄԹԱՆ - լեռնագագաթ (2796 մ) Լոռու մարզում, ամենաբարձրը Սպի-

տակի լեռներում, Պուշկին գյուղից 5 կմ հվ-արմ. (**Թողոք**):

ԲԱԶՈՒՄԻ ԼԵՌՆԵՐ - լեռներ ՀՀ հս. մասում: Զգվում է Ախուրյան գետի վերին հոսանքից մինչև Աղստև գետի միջին հոսանքը՝ շուրջ 90 կմ երկարությամբ: Ամենաբարձր գագաթը Ուրասար լեռն է (2992 մ):

ԲԱԼՈՒՔԱՐ - լեռնագագաթ (1793 մ) Սյունիքի մարզում, Բարգուշատի լեռնահամակարգում, Ռրոտան գետի աջափնյակում, Տանձատափ գյուղից 1,5 կմ հվ-արլ.:

ԲԱՆՏԱԿ - գետ Գեղարքունիքի մարզում: Սկիզբ է առնում Գեղամա լեռների հվ. մասի արլ. լանջերից և թափվում Սևանա լիճ: Երկարությունը՝ 30 կմ:

ԲԱՀԻԿ - լեռնագագաթ (1923 մ) Տավուշի մարզում, Միափորի լեռնահամակարգում, Այգուտ գյուղից 10,5 կմ հս-արլ.:

ԲԱՂԱՆԻՍ - գետ Տավուշի մարզում, Ջողազ գետի ձախ վտակը: Սկիզբ է առնում Ոսկեպարի լեռների հվ. լանջերից: Երկարությունը՝ 14 կմ:

ԲԱՂԱՅՁՈՒՐ - գետ Սյունիքի մարզում: Սկիզբ է առնում Մեղրու լեռների հս. լանջերից և Կավճուտ գյուղից 2 կմ հվ-արլ. միախառնվում Ողջի գետին: Երկարությունը՝ 17 կմ:

ԲԱՂԱՑՍԱՐ - լեռնագագաթ (3249 մ) Սյունիքի մարզում, ամենաբարձրը Մեղրու լեռներում՝ նրա կենտրոնական մասում, Ծիշկերտ գյուղից 5 կմ հս-արմ.:

ԲԱՂԱՔԱՐ - գետ Սյունիքի մարզում: Սկիզբ է առնում Ջանգեզուրի լեռներից և աջից միախառնվում Մեղրի գետին: Երկարությունը՝ 14 կմ:

ԲԱՂԱՔԱՐԻ ԱՐԳԵԼԱՎԱՅՐ - արգելավայր Սյունիքի մարզում, Ջանգեզուրի լեռների լանջերին, համանուն գետի աջափնյակում, Վահրավար գյուղից

հս-արմ.: Հիմնադրվել է 1989 թ., տարածքը՝ 2728 հա:

ԲԱՂԱՔԱՐԻ ԼԵՌՆԱՆՑՔ - լեռնանցք (2726 մ) ՀՀ Սյունիքի մարզի և Նախիջևանի սահմանագլխին, Ջանգեզուրի լեռներում, Վահրավար գյուղից 7 կմ հս-արմ.:

ԲԱՆՔՄԻ ՍՈՃՈՒ ԱՐԳԵԼԱՎԱՅՐ - արգելավայր Կոտայքի մարզում, Մարմարիկի լեռների հս. լանջերին, Մարմարիկ գետի աջափնյակում, Ծաղկաձոր քաղաքի արմ. մասում: Հիմնադրվել է 1959թ., տարածքը՝ 4 հա:

ԲԱՐԱԿ - լեռնագագաթ (1098 մ) Տավուշի մարզում, Ոսկեպարի լեռնահամակարգում, Կոթի գյուղից 2,5 կմ հս.:

ԲԱՐԱԿԱՂՔՅՈՒՐ - գետ Արարատի մարզում: Սկիզբ է առնում Երանոսի լեռներից և Արարատ քաղաքից վերև աջից միախառնվում Վեդի գետին: Երկարությունը՝ 20 կմ:

ԲԱՐԱԿՁՈՒՐ - գետակ Լոռու մարզում, Չիչկան գետի աջ օժանդակը: Սկիզբ է առնում Ճոճնասար լեռան հս-արմ. լանջերից և Սարալանջ գյուղից 4,5 կմ հս-արմ. միախառնվում մայր գետին: Երկարությունը՝ 2 կմ:

ԲԱՐԳՈՒՇԱՏԻ ԼԵՌՆԵՐ - լեռներ ՀՀ հվ. մասում, Ջանգեզուրի լեռների արլ. ճյուղավորություններից, կազմում է Ռրոտան, Ողջի և Գեղի գետերի ջրբաժանը: Երկարությունը՝ շուրջ 70 կմ: Առավելագույն բարձրությունը Արամազդ լեռն է (3399 մ):

ԲԱՐԴԵՆՈՒՑ - լեռ (1595 մ) Արարատի մարզում, Գեղամա լեռների հվ. մասում, Խոսրովի անտառ արգելոցի տարածքում:

ԲԱՐԴՈՒԹԱՂՔ - լեռնագագաթ (2270 մ) ՀՀ Սյունիքի մարզի և ԼՂՀ-ի սահմանագլխին, Մեղրու լեռների հվ-արլ. մասում, Նոնաձոր գյուղից 7 կմ հս-արլ.:

ԲԱՐԵԲԵՐ - գետ Գեղարքունիքի մարզում: Սկիզբ է առնում Արեգունի լեռնե-

րի հս-արլ. լանջերից և Դպրաբակ գյուղում ձախից միախառնվում Գետիկին: Երկարությունը՝ 15 կմ:

ԲԱՐՁԵՆՔ - լեռնագագաթ (1737 մ) Սյունիքի մարզում, Մեղրու լեռների կենտրոնական մասում, Մալն գետի վերին հոսանքի ձախափնյակում, Ալվանք գյուղից 5 կմ հս.:

ԲԱՐՁՐԱՋՈՒՐ - գետակ Լոռու մարզում, Փամբակ գետի աջ վտակը, մայր գետին է միանում Գուգարք գյուղից 1 կմ հս-արլ.: Երկարությունը՝ 7 կմ:

ԲԱՐՍԵՂԻՄԱՐ - լեռնագագաթ (1993 մ) ՀՀ Արարատի մարզի և Նախիջևանի սահմանագլխին, Գենուտի լեռներում, Զանգակատուն գյուղից 8 կմ հվ-արմ.:

ԲԱՅՄԱՐ - լեռնագագաթ (2599 մ) Գեղարքունիքի մարզում, Վարդենիսի լեռների համակարգում: Աստղածոր և Մաքոյիվար գետերի ջրբաժանում, Զոլաքար գյուղից 6,5 կմ հվ.:

ԲԱՅՐԵՆ - լեռնագագաթ (1230 մ) Տավուշի մարզում, Ոսկեայարի լեռնահամակարգում, Նոյեմբերյան քաղաքից 1 կմ արմ.:

ԲԱՅՈՒՏ - լեռնագագաթ (1684 մ) ՀՀ Տավուշի մարզի և Ադրբեջանի սահմանագլխին, Խնձորուտի լեռներում, Արծվաբերդ գյուղից 11 կմ հվ.:

ԲԵՎՈՐԱԲԼՈՒՐ - լեռ (2026 մ) Գեղարքունիքի մարզում, Արեգունի լեռնահամակարգում, Գետիկի ձախափնյակում, Ճամբարակ քաղաքի արմ. եզրին:

ԲԵՐԴ - լեռնագագաթ (1461 մ) Սյունիքի մարզում, Սյունիքի բարձրավանդակում, Որոտան գետի աջափնյակում, Որոտան գյուղից հվ-արմ.:

ԲԵՐԴ - լեռնագագաթ (1477 մ) Սյունիքի մարզում, Բարգուշատի լեռնահամակարգում: Ողջի գետի ձախափնյակում, Վերին Գիրաթաղ գյուղից 4,5 կմ հվ-արլ.:

ԲԵՐԴԱԲԼՈՒՐ - լեռնագագաթ (2183 մ) Արագածոտնի մարզում, Արագածի

լեռնահամակարգի հս. մասում, Ծաղկահովիտ գյուղից հս-արլ.:

ԲԵՐԴԱԲԼՈՒՐ - լեռնագագաթ (1787 մ) Գեղարքունիքի մարզում, Միափորի լեռնահամակարգում, Միափոր և Քարենտարակ գետերի ջրբաժանում, Այգուտ գյուղից 1,5 կմ հս-արլ.:

ԲԵՐԴԱԼԻՃ - լիճ ՀՀ Սյունիքի մարզի և ԼՂՀ-ի սահմանագլխին, Սյունիքի բարձրավանդակում, Ծղուկ գյուղից 10 կմ հս-արլ., ծովի մակարդակից 3020 մ բարձրության վրա: Մակերեսը՝ 5 հա:

ԲԵՐԴԱԿ - լեռնագագաթ (1529 մ) Լոռու մարզում, Սևորոյաց լեռնահամակարգում, Դբեղ գետի աջափնյակում, Չկալով գյուղից 0,5 կմ հս.:

ԲԵՐԴԱԿ - լեռնագագաթ (1677 մ) Շիրակի մարզում, Արագածի լեռնագանգվածի հս-արմ. ստորոտում, Շիրակի սարահարթի արլ. մասում, Հոռոմ գյուղից 0,5 կմ արլ.:

ԲԵՐԴԱԿ - բլուր (981 մ) Տավուշի մարզում, Ոսկեայարի լեռնահամակարգում, Նոյեմբերյան քաղաքից 2 կմ հս-արլ.:

ԲԵՐԴԱՋՈՐ - գետ Կոտայքի մարզում, տե՛ս **Զորաղբյուր**:

ԲԵՐԴԱՋՈՐ - գետակ Վայոց ձորի մարզում, Հերիեր գետի ձախ օժանդակը: Սկիզբ է առնում Կանաչկող լեռան հվ. լանջից և Հերիեր գյուղից 1 կմ հվ-արլ.միանում մայր գետին: Երկարությունը՝ 7,5 կմ:

ԲԵՐԴԱՋՈՐ - գետակ Վայոց ձորի մարզում, Արփա գետի ձախ օժանդակը: Սկիզբ է առնում Երկճղի ժայռի արմ. կողմից և Արենի գյուղի հս. մասում միանում մայր գետին: Երկարությունը՝ 7 կմ:

ԲԵՐԴԱՋՈՐ - կիրճ Վայոց ձորի մարզում, համանուն գետակի հովտում, Արենի գյուղից 2 կմ հվ-արլ.: Երկարությունը՝ 2 կմ:

ԲԵՐԴԱՋՈՐ - գետակ Լոռու մարզում, Դեբեդի աջ օժանդակը: Սկիզբ է առնում Հալվաներսար լեռան հս. լանջից և Հաղպատ գյուղից 3 կմ հս-արլ. միախառնվում մայր գետին: Երկարությունը՝ 6 կմ:

ԲԵՐԴԱՍԱՐ - լեռնագագաթ (2343 մ) Արագածոտնի մարզում, Արագած լեռնազանգվածի հս. ստորոտին, Գեղաձոր գյուղից 1,5 կմ հվ-արմ.:

ԲԵՐԴԱՍԱՐ - լեռնագագաթ (2058 մ) Գեղարքունիքի մարզում, Միափորի լեռնահամակարգում, Գետիկի աջափնյակում, Այգուտ գյուղից 4 կմ արլ.:

ԲԵՐԴԱՔԱՐ - բլուր (1361 մ) Կոտայքի մարզում, Արզնի-Շամիրամ ջրանցքի աջափնյակում, Եղվարդ քաղաքից 4 կմ հվ.:

ԲԵՐԴԱՔԱՐ - լեռնագագաթ (2164 մ) Սյունիքի մարզում, Մեղրու լեռների ճյուղավորություններում, Ալվանք գյուղից 6 կմ հս-արմ.:

ԲԵՐԴԱՔԱՐ - լեռ (2164 մ) Սյունիքի մարզում, Ջանգեզուրի լեռնահամակարգի կենտրոնական մասում, Աղաջուր գետի ձախափնյակում, Նժդեհ գյուղից 2 կմ հս.:

ԲԵՐԴԱՔԱՐ - լեռնագագաթ (2221 մ) Վայոց ձորի մարզում, Վայքի լեռներում, Արտավան գյուղից 2,5 կմ հվ-արմ.:

ԲԵՐԴԱՔԱՐ - ժայռ ՀՀ Վայոց ձորի մարզի և Նախիջևանի սահմանազրկիսին, Վայքի լեռնահամակարգում, Խաչիկ գյուղից 3 կմ հս-արմ.:

ԲԵՐԴԵՐ - լեռնագագաթ (2090 մ) Արագածոտնի մարզում, Արագածի լեռնազանգվածի հվ-արլ. մասում, Վարդենուտ գյուղից 1 կմ արմ.:

ԲԵՐԴԻ ԳՆՈՄՆ - հանդ Կոտայքի մարզում, Սևաբերդ գյուղից 3 կմ հվ-արմ.:

ԲԵՐԴԻ ՔԱՐ - լեռ (2290 մ) Արարատի մարզում, Տասանորդի լեռների կենտ-

րոնական մասում, Լանջանիստ գյուղից 1 կմ հս-արլ.:

ԲԵՐԴԻԿ - լեռնագագաթ (2127 մ) Կոտայքի մարզում, Մարմարիկի լեռների հս. ճյուղավորություններում, Մարմարիկ գյուղից 1 կմ հվ-արմ.:

ԲԵՐԴԻԿ - լեռնագագաթ (1601 մ) Սյունիքի մարզում, Մեղրու լեռնահամակարգում, Խուստուփաձոր գետի աջափնյակում, Շիկահող գյուղից 1,5 կմ հս-արմ.:

ԲԵՐԴՔԱՐ - լեռ (1143 մ) Սյունիքի մարզում, Թոնրագետի աջափնյակում, Նոնաձոր գյուղից 3,5 կմ արլ.:

ԲԵՐԻԳԵՂ - լեռնագագաթ Տավուշի մարզում, տե՛ս **Կաղխուտթումբ**:

ԲԵՐԻՐ - հանդ Սյունիքի մարզում, Սյունիքի բարձրավանդակում, Կարմրաբլուր լեռան հս-արլ. լանջին, Սառնակունք գյուղից 7,5 կմ հս-արլ.:

ԲԵՐՔԱԲԵՐԻ ՋՐԱՍՔԱՐ - արհեստական լիճ Տավուշի մարզում՝ Ձողազ գետի վրա: Ջրի ծավալը 43 մլն մ³: Ծառայում է Տավուշի մարզի հողերը ոռոգելու համար:

ԲԵՐՔԱՋՈՐ - գետակ Վայոց ձորի մարզում, Եղեգիս գետի ձախ օժանդակը: Սկիզբ է առնում Ճաղատսար լեռան արմ. լանջերից բխող աղբյուրներից և Գետիկվանք գյուղից 1 կմ արլ. միախառնվում մայր գետին: Երկարությունը՝ 8 կմ:

ԲԶՂՈՆ - լեռնագագաթ (2476 մ) ՀՀ Վայոց ձորի մարզի և Նախիջևանի սահմանազրկիսին, Վայքի լեռնահամակարգում, Նոր Ազնաբերդ գյուղից 6 կմ արմ.:

ԲԻՔԱՐԱՆՈՑ - լեռնագագաթ (1976 մ) Վայոց ձորի մարզում, Վարդենիսի լեռնահամակարգի հվ. մասում, Վերնաշեն գյուղից 3 կմ արլ.:

ԲԻՆԱՍԱՐ - լեռնագագաթ (2594 մ) Սյունիքի մարզում, Կողբաձորի լեռներ-

րում, Մեծշեն գետի ձախափնյակում, Ակնեք գյուղից 3 կմ հս-արմ.:

ԲԻՆԱՉՈՐ - գետ Լոռու մարզում, Մաշակեր գետի աջ օժանդակը: Սկիզբ է առնում Պահապան լեռան հս. լանջից և Գոգավան գյուղից 1 կմ հս-արլ. դուրս է գալիս ՀՀ-ի սահմաններից: Երկարությունը՝ 20 կմ, ՀՀ-ի տարածքում՝ 5 կմ:

ԲԼՂԱՆ - գետ Տավուշի մարզում: Սկիզբ է առնում Բովաքար լեռան հվ. լանջերից և ձախից միախառնվում Աղստևին: Երկարությունը՝ 15 կմ: Բլղանի հովտում են գտնվում “Դիլիջան” հանքային ջրի աղբյուրները:

ԲԼԵՎԱՆ - լեռնագագաթ (1664 մ) Վայոց ձորի մարզում, Քարկատարի լեռնահամակարգում, Եղեգիս գետի աջ կողմում, Գետափ գյուղից 3,5 կմ հս-արմ.:

ԲԼԸԱԿ - բլուր (852 մ) Արարատի մարզում, Վեդի գետի աջափնյակում, Այգավան գյուղի արմ. մասում:

ԲԼԸԱԿՈՂ - բլուր (566 մ) Տավուշի մարզում, Պապաքարի լեռնահամակարգում, Դեբետավան գյուղից 1,5 կմ հս-արլ.:

ԲԼՈՐ - լեռ Սյունիքի մարզում, տե՛ս Մատաղաբլուր:

ԲԼՈՐ - լեռնագագաթ (1664 մ) Սյունիքի մարզում, Շինուհայրի սարավանդում, Խոտ գյուղից 2,5 կմ հս-արմ.:

ԲԼՈՐ - լեռնագագաթ (1281 մ) Սյունիքի մարզում, Բարգուշատի լեռնահամակարգում, Արծվանիկ գետի աջափնյակում, Սևաքար գյուղից 1 կմ հվ.:

ԲԼՈՐ - հանդ Վայոց ձորի մարզում, Վարդենիսի լեռների հվ. լանջերին, Քարագլուխ գետի աջափնյակում, Քարագլուխ գյուղից 5 կմ հս-արլ.:

ԲԼՈՐՔ - հանդ Լոռու մարզում, Արքայանիստ լեռան հվ-արլ. լանջին, Ալավերդի քաղաքից 4,5 կմ հս-արլ.:

ԲՂԵՆ - լեռ (2528 մ) Սյունիքի մարզում, Զանգեզուրի լեռների հս-արլ. մասում, Յածիգետի աջափնյակում, Մավվարդ գյուղից 3 կմ հվ-արմ.:

ԲՆՈՍ - լեռնագագաթ (2532 մ) Արարատի և Վայոց ձորի մարզերի սահմանագլխին, Գեղուտի լեռների հս-արլ. մասում, Ելփին գյուղից 4 կմ հս-արմ.:

ԲՈԶԻԿ - լեռ (1956 մ) Շիրակի մարզում, Արագած լեռնազանգվածի արմ. ստորոտին, Մարալիկ քաղաքից 2 կմ հվ.:

ԲՈՆՈՐԱՄԱՐ - լեռնագագաթ (1731 մ) Արագածոտնի և Շիրակի մարզերի սահմանագլխին, Արագածի լեռնահամակարգի արմ. մասում, Ցամաքասար գյուղից 3 կմ հս.:

ԲՈՆՈՐԱՔԱՐ - լեռնագագաթ (2009 մ) Սյունիքի մարզում, Բարգուշատի լեռնահամակարգում, Տաթև գյուղից 2,5 կմ հս-արմ.:

ԲՈՆՈՐԿՈՆ - լեռնագագաթ (1735 մ) Լոռու մարզում, Վիրահայոց լեռների համակարգում, Տաշիր գետի ձախափնյակում, Մեղովկա գյուղից 1,5 կմ հս.:

ԲՈՆՈՐԿՈՆԴ - լեռնագագաթ (1967 մ) Լոռու մարզում, Գուգարաց լեռների արմ. ձյուղավորություններում, Օձուն գյուղից 4,5 կմ արլ.:

ԲՈՆՈՐՄԱՐԳ - հանդ Սյունիքի մարզում, Խորական լեռան հս. լանջին, Բոնակոթ գյուղից 1 կմ հվ.:

ԲՈՆՈՐՄԱՐ - լեռնագագաթ (1785 մ) Շիրակի մարզում, Արագածի լեռնազանգվածի հս-արմ. ստորոտում, Շիրակի սարահարթի արլ. մասում, Տուֆաշեն գյուղի հվ. եզրին:

ԲՈՆՈՐՏՈՆ - լեռնագագաթ (2051 մ) Գեղարքունիքի մարզում, Միափորի լեռնահամակարգում, Վահան գյուղից 3,5 կմ արլ.:

ԲՈՆՈՍ - հանդ Գեղարքունիքի մարզում, Ծակքար լեռան արմ. լանջերին, Գեղաքար գյուղից 6 կմ հվ-արլ.:

ԲՈՂՆՅԱՅ - գետ Լոռու մարզում, պատմական Գաջենագետի (Մաշավերի) աջ օժանդակը: Սկիզբ է առնում Վիրահայոց լեռների՝ Գայլեղրունք լեռնանցքի հվ-արլ. կողմից և Վրաստանի տարածքում միանում մայր գետին: Երկարությունը՝ 40 կմ, շտաբածքում՝ 10 կմ:

ԲՈՎՍԲՆՈՒՐ - լեռնագագաթ (2058 մ) Գեղարքունիքի մարզում, Արեգունի լեռների հվ. մասում, Դրախտիկ գետի աջափնյակում, Դրախտիկ գյուղից 1 կմ արմ.:

ԲՈՎՍՏԵՂ - լեռնագագաթ (2275 մ) Գեղարքունիքի մարզում, Արևելյան Սևանի լեռնահամակարգում, Սոթ գյուղից 2,5 կմ հս-արլ.:

ԲՈՎՍՔԱՐ - լեռնագագաթ (3016 մ) Լոռու մարզում, ամենաբարձրը Բովաքարի լեռներում, Մարգահովիտ գյուղից 6 կմ հս. (Հալաք):

ԲՈՎՍՔԱՐԻ ԼԵՌՆԵՐ - լեռներ Լոռու և Տավուշի մարզերի սահմանագլխին, Բագունի լեռների արլ. հատվածը՝ Գայլաձորի կիրճից մինչև Աղստև գետի միջին հոսանքը: Առավելագույն բարձրությունը՝ Բովաքար լեռ (3016 մ) (Հալաքի լեռներ):

ԲՈՎՆՈՑ - լեռ (2481 մ) Գեղարքունիքի մարզում, Վարդենիսի լեռների հս. փեշերին, Ակունք գյուղից 4,5 կմ հվ-արլ.:

ԲՈՐԲՈՐԹ - լեռնագագաթ (2363 մ) Լոռու մարզում, Բովաքարի լեռների հս-արմ. ճյուղավորություններում՝ Ալարեքս և Մարց գետերի միջև, Եղեգնուտ գյուղից 9 կմ հվ-արլ.:

ԲՋՆԻ - գետ Կոտայքի մարզում: Սկիզբ է առնում Ծաղկունյաց լեռան հվ. լանջից և հոսելով Ծաղկաձոր քաղաքի մոտով, թափվում Հրազդան գետը: Երկարությունը՝ 10 կմ:

ԲՋՆՈՍԱՐ - լեռնագագաթ (2588 մ) Կոտայքի մարզում, Բջնի գետի աջ

ափնյակում, Բջնի գյուղից 5 կմ հս-արլ.:

ԲՈՒՍԱԿՈԹ - գետ Սյունիքի մարզում: Սկիզբ է առնում Զանգեզուրի լեռներից և Սիսիան քաղաքից 0,5 կմ հվ. աջից միախառնվում Որոտանին: Երկարությունը՝ 15 կմ:

ԲՐՉԱՍԱՐ - լեռ (1641 մ) Արարատի մարզում, Արածոգետի ձախափնյակում, Պարույր Սևակ գյուղից 4,5 կմ արլ.:

ԲՐՉԱՍԱՐ - լեռնագագաթ (1382 մ) Տավուշի մարզում, Վարազի լեռներում, Այգեհովիտ գյուղից 4 կմ հվ-արլ.:

ԲՐՁԵՎԱՆ - լեռնագագաթ (2264 մ) Սյունիքի մարզում, Մեղրու լեռնահամակարգում, Շիշկերտ գետի ձախափնյակում, Շիշկերտ գյուղից 1 կմ հս-արլ.:

ԲՐՏԱՋՈՒՐ - գետակ Սյունիքի մարզում, Բարգուշատի լեռնահամակարգում, Աճանան գետի ձախ օժանդակը: Սկիզբ է առնում Աղջկասար լեռան արմ. լանջից և մայր գետին միանում Աճանան գյուղից 1,5 կմ հս-արմ.:

Երկարությունը՝ 6,5 կմ:
ԲՈՒԺԱԿԱՆԻ ԼԵՌՆԵՐ - լեռներ Կոտայքի մարզում, Ծաղկունյաց լեռների հվ-արլ. ճյուղավորված մասի լեռնաբազուկներից, Բուժական գյուղից 5,5 կմ հս-արմ.:

Ամենաբարձր գագաթը՝ Բուժականի սար (2806 մ):
ԲՈՒԺԱԿԱՆԻ ՄԱՐ - լեռնագագաթ (2806 մ) Կոտայքի մարզում, Բուժականի լեռներում, Բուժական գյուղից 5,5 կմ հս-արմ.:

ԲՈՒՐԱՍԱՐ - լեռ (1961 մ) Արարատի մարզում, Լանջառ գետի ձախափնյակում, Ուրցալանջ գյուղից 1,5 կմ հվ-արմ.:

ԲՈՒՐՏԻՆՔԱՐ - լեռնագագաթ (1645 մ) Սյունիքի մարզում, Շավիղ գետի աջափնյակում, Շվանիձոր գյուղից 3,5 կմ հս-արլ.:

Գ

ԳԱԲՈՒՌ - լեռնագագաթ (3060 մ) Սյունիքի և Վայոց ձորի մարզերի սահմանագլխին, Զանգեզուրի լեռների հս. մասում, Որոտանի լեռանցքից արլ., Արտավան գյուղից 7,5 կմ հվ-արլ.:

ԳԱԲՈՒՌԴՈՆ - գետակ Սյունիքի մարզում, Արաքսի ավազանում: Սկիզբ է առնում Սևքար լեռան հվ-արլ. լանջերից և Ալվանք գյուղից 5,5 կմ հվ-արմ. միախառնվում Արաքս գետին: Երկարությունը՝ 5 կմ:

ԳԱԶՆԱՆ ԼԵՌՆԱՆՑՔ - լեռնանցք (3112 մ) Սյունիքի մարզում, Զանգեզուրի լեռների հվ. մասում, Գեղի և Կարթ գետերի վերնագավառների միջև, Գազանալճից 1,5 կմ հս-արլ., Քաջարանից 12 կմ հս-արմ.:

ԳԱԶՆԱՍԼԵՆ - լեռնագագաթ (3829 մ) ՀՀ Սյունիքի մարզի և Նախիջևանի սահմանագլխին, Զանգեզուրի լեռների հվ. մասում, Գազանա լեռնանցքից 3,5 կմ հվ-արմ.:

ԳԱԶՆԱՍԼԻՔ - լիճ Սյունիքի մարզում, Զանգեզուրի լեռների կատարային մասում, Քաջարանից 11 կմ հս-արմ., ծովի մակարդակից 3112 մ բարձրության վրա: Մակերեսը՝ 1,8 հա: Խորությունը՝ մինչև 10 մ:

ԳԱԶՆԱՄՂԲՑՈՐ - աղբյուր Գեղարքունիքի մարզում, Կաղնուտ գետի միջին հոսանքի աջափնյակում, Վարդանիքար լեռան հս. լանջին, Արծվաշեն գյուղից 2,5 կմ հվ.:

ԳԱԼՈՅԻ ՍԱՐ - լեռնագագաթ (2166 մ) Լոռու մարզում, Փամբակի լեռների հս. ճյուղավորություններում, Կաթնաջուր գյուղից 3,5 կմ արլ.:

ԳԱԼՈՒԿԹՈՒՄԲ - գետակ Գեղարքունիքի մարզում, Կաղնուտ գետի օժանդակը: Սկիզբ է առնում Կորնետ լեռան

հվ-արմ. լանջից և Վարդանիքար լեռնագագաթից 0,5 կմ արմ. միախառնվում մայր գետին: Երկարությունը՝ 1,5 կմ:

ԳԱՀԱՆԻՍ - լեռնագագաթ (2510 մ) Սյունիքի մարզում, Բարգուշատի լեռներում, Արամազդ գագաթից հս-արլ., Սվարանց գյուղից 3,5 կմ հվ-արմ.:

ԳԱՄՍՍԱՐ - լեռնագագաթ (2466 մ) Վայոց ձորի մարզում, Վայքի լեռների կատարային մասում, Հորաղիս գյուղից 2 կմ հս-արմ.:

ԳԱՅԼԱԲԼՈՐ - լեռ (1749 մ) Շիրակի մարզում, Արագածի լեռնազանգվածի արմ. փեշերին, Զիթհանքով գյուղից 1 կմ հվ-արմ.:

ԳԱՅԼԱԲՈՅՆ - լեռ (986 մ) Տավուշի մարզում, Գուգարաց լեռնահամակարգի Մթնասար լեռների հս-արլ. մասում, Սևքար գյուղից 1,5 կմ հվ-արլ.:

ԳԱՅԼԱՍՈՒԹ - հանդ Սյունիքի մարզում, Սյունիքի բարձրավանդակում, Շաքարջուր գետի ձախափնյակում, Գորիս քաղաքից 0,5 կմ հվ-արմ.:

ԳԱՅԼԱՁՈՐ - գետ Գեղարքունիքի մարզում: Սկիզբ է առնում Վարդենիսի լեռների հս. լանջից և Մաղինա գյուղից 7,5 կմ հվ-արմ. աջից միախառնվում Արգիճի գետին: Երկարությունը՝ 22 կմ:

ԳԱՅԼԱՁՈՐ - գետ Գեղարքունիքի մարզում, Գոթիձորի ձախ վտակը: Սկիզբ է առնում Գեղամա լեռների կենտրոնական մասից և Գավառ քաղաքից 1 կմ հվ. միախառնվում մայր գետին: Երկարությունը՝ 20 կմ:

ԳԱՅԼԱՁՈՐ - քարանձավ Երևանի՝ Նորք-Մարաշ համայնքի արմ. մասում:

ԳԱՅԼԱՁՈՐ - գետակ Սյունիքի մարզում, Արամազդ գետի ձախ օժանդակը:

Սկիզբ է առնում Բարգուշատի լեռներից և Գեղի գյուղից 2 կմ հս. միախառնվում մայր գետին: Երկարությունը՝ 9 կմ:

ԳԱՅԼԱՉՈՐԻ ԿԻՐՃ - կիրճ Լոռու մարզում, Փամբակ գետի ստորին հոսանքում, Գուգարք և Վահագնաձոր գյուղերի միջև: Երկարությունը՝ 12 կմ (**Գայլասարի ձոր**):

ԳԱՅԼԱՌՈՒ - լեռնագագաթ (2120 մ) Արագածոտնի մարզում, Արագածի լեռնահամակարգի հվ-արլ. մասում, Գեղարտ գետի ձախափնյակում, Արագածավան գյուղից 1 կմ արմ.:

ԳԱՅԼԱՍԱՐ - լեռ (1841 մ) Արարատի մարզում, Արածոգետի ձախափնյակում, Ջանգակատուն գյուղից 2 կմ հվ-արմ.:

ԳԱՅԼԱՍԱՐ - լեռ (1631 մ) Շիրակի մարզում, Շիրակի սարահարթում, Հայկաձոր գյուղից 1,5 կմ հվ.:

ԳԱՅԼԱՍԱՐ - լեռնագագաթ (2669 մ) Սյունիքի մարզում, Մեղրու լեռնահամակարգում, Ողջի գետի աջափնյակում, Ներքին Գիրաթաղ գյուղից 4 կմ հվ-արլ.:

ԳԱՅԼԱՍԱՐԻ ՉՈՐ - կիրճ Լոռու մարզում, տե՛ս **Գայլաձորի կիրճ**:

ԳԱՅԼԱՏԵՂ - լեռնագագաթ (1728 մ) Գեղարքունիքի մարզում, Արեգունի լեռների համակարգում, Բարեբեր գետի միջին հոսանքի ձախափնյակում, Բարեպատ գյուղից 1 կմ հս-արմ.:

ԳԱՅԼԱՐԵԳ - լեռնագագաթ (2595 մ) Սյունիքի մարզում, Ջանգեզուրի լեռների արլ. փեշերին, Տճեհե գյուղից 3 կմ հս.:

ԳԱՅԼԱՔԱՐ - լեռնագագաթ (3123 մ) Լոռու մարզում, Ջավախքի լեռների արլ. բազուկների վրա, Նորամուտ գյուղից 13 կմ արմ.:

ԳԱՅԼԵՂՐՈՒՆՔ - լեռնանցք (1798 մ) ՀՀ Լոռու մարզի և Վրաստանի սահմանագլխին, Վիրահայոց լեռների միջին

մասում, ՀՀ Ուռուտ գետի հովտից դեպի Վրաստանի Աղքյորփի գետի հովիտը:

ԳԱՅԼԵՉՈՐ - լեռնագագաթ (2762 մ) Վայոց ձորի մարզում, Թեքսարի լեռնահամակարգում, Եղեգիս գետի ձախափնյակում, Եղեգիս գյուղից 2,5 կմ հվ.:

ԳԱՆՉԱԿ - լեռնագագաթ (2374 մ) Վայոց ձորի մարզում, Վայքի լեռների հս-արմ. լանջին, Մոզորով գյուղից 2,5 կմ հվ-արմ.:

ԳԱՆՉԱԿ - հանդ Վայոց ձորի մարզում, Գնիշիկ գետի աջափնյակում, Արենի գյուղից 2,5 կմ արլ.:

ԳԱՆՉԱԿՈՒՆՔ - լեռնագագաթ (1643 մ) Սյունիքի մարզում, Բարգուշատի լեռնահամակարգում, Վանեք գյուղից 3,5 կմ հվ.:

ԳԱՆՉԱՍԱՐ - լեռ (2260 մ) Սյունիքի մարզում, Ողջի գետի վերնագավառում, Քաջարանից 1,5 կմ հվ.:

ԳԱՆՉԱՔԱՐ - լեռնագագաթ (2602 մ) Գեղարքունիքի մարզում, Վարդենիսի լեռնահամակարգում, Վարդենիս գետի ձախափնյակում, Վարդենիկ գյուղից 7 կմ հվ.:

ԳԱՆՉԱՔԱՐԻ ԱՐԳԵԼԱՎԱՅՐ - արգելավայր Տավուշի մարզում, Վարազի լեռների արմ. լանջերին, Ադստե գետի աջափնյակում, Գանձաքար գյուղից արլ.: Հիմնադրվել է 1971 թ., տարածքը՝ 6800 հա:

ԳԱՋԱՀԱՆՔ - բարձունք (1374 մ) Երևան քաղաքի հվ-արլ. մասում, Ողջաբերդի լեռների լանջին, Ջրվեժ գետի հովտում:

ԳԱՌՆԱԿԱՆՋ - լեռնագագաթ (2820 մ) Սյունիքի մարզում, Բարգուշատի լեռներում, Քարուտ գյուղից 3,5 կմ արմ.:

ԳԱՌՆԱՌԻՃ - լեռ (2206 մ) Շիրակի մարզում, Ջավախքի սարահարթում, Եղնաջուր գետի ձախափնյակում, համանուն գյուղից 1 կմ հս-արմ.:

ԳԱՌՆԱՄԱՐ - լեռնագագաթ (2295 մ) Արագածոտնի և Շիրակի մարզերի սահմանագլխին, Արագած լեռնազանգվածի արմ. փեշերին, Գառնեհովիտ գյուղից 1 կմ հս.:

ԳԱՌՆԱՐԱՄ - լեռ (2660 մ) Սյունիքի մարզում, Զանգեզուրի լեռների հս-արլ. մասում, Սալվարդ գյուղից 3,5 կմ հս-արմ.:

ԳԱՌՆԱՔԱՐ - լեռնագագաթ (2770 մ) Լոռու և Տավուշի մարզերի սահմանագլխին, Գուգարաց լեռներում, Դիլիջան քաղաքից 7,5 կմ հս-արմ.:

ԳԱՌՆԻ - գետ Արարատի և Կոտայքի մարզերում, տե՛ս **Ազատ**:

ԳԱՌՆԻԻ ՋՐԱՆՅՔ - հանված է Ազատ գետի աջ ափից: Երկարությունը՝ 14 կմ: Ոռոգում է Կոտայքի մարզի հողերը:

ԳԱՌՆՀՈՎԻՏ - գետ Արագածոտնի և Շիրակի մարզերում: Սկիզբ է առնում Արագած լեռան արմ լանջերից և ձախից միախառնվում Կարկաչան գետին: Երկարությունը՝ 35 կմ:

ԳԱՌՆՈՒ ԱՐԳԵԼՈՑ - տե՛ս **Խոսրովի անտառ**:

ԳԱՌՆՈՒ ԴԱՇՏ - դաշտ Կոտայքի մարզում, Ազատ գետի ստորին հոսանքի շրջանում, Գառնի գյուղից 5 կմ հվ-արմ.:

ԳԱՎԱՌ - լեռ (2052 մ) Գեղարքունիքի մարզում, Գավառ քաղաքից 2 կմ հս.:

ԳԱՎԱՌԱԳԵՏ - գետ Գեղարքունիքի մարզում: Կազմավորվում է Գեղարքունիք և Գոռիձոր գետերի միախառնումից և Նորատուսի հրվանդանից արմ. թափվում Սևանա լիճ: Երկարությունը՝ 24 կմ:

ԳԱՐԳԱՌ - գետ Լոռու մարզում: Սկիզբ է առնում Մալխակի լեռնաբազուկից և Կուրթան գյուղից ներքև աջից միախառնվում Ջորագետին: Երկարությունը՝ 28 կմ:

ԳԱՐԴՄԱՆ - լեռնագագաթ (1347 մ) Տավուշի մարզում, Իջևանի լեռների հվ-արմ. մասում, Աղստև գետի ձախափնյակում, Թեղուտ գյուղից 1 կմ հս-արմ.:

ԳԱՐԵԱՐՏ - գետակ Սյունիքի մարզում, Բաղացջրի աջ օժանդակը: Սկիզբ է առնում Խուստուփ լեռնագագաթի հս. լանջից և Լեռնաձոր գյուղից 7 կմ արլ. միանում մայր գետին: Երկարությունը՝ 6,5 կմ:

ԳԱՐՈՒՆՔ - հանդ Գեղարքունիքի մարզում, Սևանա լճի ափամերձ գոտում, Զուլաքար գյուղից 1 կմ հս.:

ԳԱՐՈՒՆՔ - լեռնագագաթ (2742 մ) Վայոց ձորի մարզում, Վայքի լեռներում, Մարտիրոս գյուղից 3 կմ արլ.:

ԳԱՐՈՒՆՔ - հանդ Սյունիքի մարզում, Զոհաջրի աջափնյակում, Թասիկ գյուղից 1 կմ հս-արմ.:

ԳԱՐՈՒՄԱՐ - լեռ (1941 մ) Սյունիքի մարզում, Սյունիքի բարձրավանդակում, Աղիտու գյուղից 2,5 կմ հս-արլ.:

ԳԵԼԵՐ - լեռնագագաթ (2494 մ) Գեղարքունիքի մարզում, Վարդենիսի լեռնահամակարգում, Աստղաձոր գյուղից 4 կմ հվ.:

ԳԵԼԵՐ - լեռնանցք (2260 մ) Լոռու մարզում, Չքնաղի լեռներում, Փամբակի և Խորգետակի հովիտների միջև, Գոգարան գյուղից 3 կմ հս-արմ.:

ԳԵԼԻՔԵՐՄ - լեռ (1940 մ) Սյունիքի մարզում, Սյունիքի բարձրավանդակում, Ակներ գյուղի հս-արմ. եզրին:

ԳԵՂ - պատմական լեռ Կոտայքի մարզում, տե՛ս **Գեղմաղան**:

ԳԵՂԱԲԵՐԴ - գետակ Սյունիքի մարզում, Սալվարդ գետի օժանդակը: Սկիզբ է առնում Զանգեզուրի լեռներից և Արևիս գյուղից 2 կմ արմ. միանում մայր գետին: Երկարությունը՝ 5 կմ:

ԳԵՂԱԹԱՌ - գետ Լոռու մարզում: Սկիզբ է առնում Գուգարաց լեռների արմ. լանջերից և Ահնիձոր գյուղից 2 կմ

հվ-արմ. ձախից միախառնվում Ահ-նիձոր գետին: Երկարությունը՝ 12 կմ:
ԳԵՂԱՍԱԶ - լեռ (1503 մ) Շիրակի մարզում, Շիրակի սարահարթում, Ախուրյան գետի ձախափնյակում, Աղին գյուղից 2 կմ հվ-արմ.:

ԳԵՂԱԶՈՐ - գետ Արագածոտնի և Շիրակի մարզերում: Սկիզբ է առնում Արագած լեռան հս-արմ. լանջերից և աջից միախառնվում Մանթաշ գետին: Երկարությունը՝ 34 կմ:

ԳԵՂԱԶՈՐ - ձոր Արարատի և Կոտայքի մարզերի սահմանագլխին, Ազատ գետի հովտում: Չգվում է Գառնի գյուղից մինչև Ազատի ջրամբարը: Երկարությունը՝ 10 կմ:

ԳԵՂԱԶՈՐ - գետակ Գեղարքունիքի մարզում: Սկիզբ է առնում Կարկտասար լեռան հս-արլ. լանջերի աղբյուրներից և Ճամբարակ քաղաքից հս. ձախից միախառնվում Գետիկին: Երկարությունը՝ 6,5 կմ:

ԳԵՂԱՂՔՑՈՐ - գետակ Սյունիքի մարզում, Քաշունի գետի օժանդակը: Սկիզբ է առնում Երիցվանք լեռան հս. լանջից և Դավիթ Բեկ գյուղից 1 կմ հվ-արլ. միանում մայր գետին: Երկարությունը՝ 4 կմ:

ԳԵՂԱՍԱ ԵՐԿԻՐ - Սևանա լճի ավազանի հին անվանումը: Ընդգրկել է այժմյան Գեղարքունիքի մարզը: Միջին դարերում մի մասը՝ Գավառի և Մարտունու տարածաշրջանները, կոչվել է Գեղարքունիք և կազմել է Մեծ Հայքի Սյունիք նահանգի մի մասը:

ԳԵՂԱՍԱ ԼԵՌՆԵՐ - հրաբխային լեռներ Արարատի, Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի սահմանագլխին, ձգվում են Սևանա և Արարատյան գոգավորությունների միջև՝ Հրազդան գետի վերին հոսանքից սկսած գրեթե միջօրեականի ուղղությամբ մինչև Վարդենիսի լեռների արմ. ծայրամասը, որին հանգուցվում են Գնդասար

գագաթում: Երկարությունը՝ շուրջ 70 կմ: Առավելագույն բարձրությունը՝ Աժդահակ լեռ (3597 մ):

ԳԵՂԱՍՄԱՍԱՐ - գետ Գեղարքունիքի մարզում: Սկիզբ է առնում Սևանի լեռներից և Գեղամասար գյուղից հվ. թափվում Սևանա լիճ: Երկարությունը՝ 12 կմ:

ԳԵՂԱՍՄՎԱՆԻ ՍԱՐՄՎԱՆԻ - սարավանդ Գեղարքունիքի մարզում, Գեղամա լեռների հս. մասում, Լճաշեն և Դոմաշեն գյուղերի միջև: Տարածվում է մինչև Հրազդան գետը:

ԳԵՂԱՆՈՇ - գետ Սյունիքի մարզում: Սկիզբ է առնում Խուստուփ լեռնագագաթից և Կապան քաղաքից արլ. աջից միախառնվում Ողջի գետին: Երկարությունը՝ 17 կմ:

ԳԵՂԱՆՈՇ - գետակ Սյունիքի մարզում, Գեղի գետի աջ օժանդակը: Սկիզբ է առնում Երիցասար լեռան արմ. լանջից և Գեղի գյուղի հս. մասում միախառնվում մայր գետին: Երկարությունը՝ 5 կմ:

ԳԵՂԱԶՈՐ - գետակ Գեղարքունիքի մարզում: Սկիզբ է առնում Միափորի լեռների հվ. լանջերից և Դպրաբակ գյուղի մոտ աջից միախառնվում Գետիկին: Երկարությունը՝ 7 կմ:

ԳԵՂԱՍԱՐ - լեռնագագաթ (3443 մ) Արարատի և Գեղարքունիքի մարզերի սահմանագլխին, Ուղտուկարի լեռներում, Ուրցածոր գյուղից 26 կմ հս-արլ. (**Փոքր Մպիտակասար**):

ԳԵՂԱՍԱՐ - լեռնագագաթ (1901 մ) Տավուշի մարզում, Գուգարաց լեռների համակարգում, Ծաղկաշատ գյուղից 8,5 կմ հվ-արլ.:

ԳԵՂԱՐԱՆԻՃ - լճակ Արարատի մարզում, տե՛ս **Վիշապալիճ**:

ԳԵՂԱՐՈՏ - գետ Արագածոտնի մարզում, Քասաղ գետի աջ օժանդակը: Սկիզբ է առնում Արագած լեռան գագաթային շրջանից և Ափնագյուղից 1

կմ հվ-արլ. միախառնվում մայր գետին: Երկարությունը՝ 25 կմ:

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՋՈՒՐ - գետ Գեղարքունիքի մարզում, տե՛ս **Գեղարքունիք**:

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ - գետ Գեղարքունիքի մարզում, Գավառագետի աջ օժանդակը: Սկիզբ է առնում Գեղամա լեռների կենտրոնական մասից և Գավառ քաղաքից հվ. միանում մայր գետին: Երկարությունը՝ 29 կմ (**Գեղարքունիքում**):

ԳԵՂԱՐՔՈՒՆՅԱՑ ՇՂԹԱ - լեռնաթումբ Գեղարքունիքի մարզում, Գեղամա լեռներից արլ.՝ Գեղարքունիք գետի հովտի և Սևանա լճի միջև: Երկարությունը՝ 20 կմ:

ԳԵՂԱՐՔՈՒՆՅԱՑ ՄԱՐ - լեռ (2437 մ) Գեղարքունիքի մարզում, Գեղամա լեռնահամակարգի համանուն լեռնաթմբի ամենաբարձր կետը, Երանոս գյուղից 2,5 կմ հս-արմ.:

ԳԵՂԱՔԱՐ - լեռնագագաթ (3131 մ) Գեղարքունիքի մարզում, Գեղամա լեռնահամակարգում, Գեղարքունիք գետի ձախափնյակում, Երանոս գյուղից 14 կմ արմ.:

ԳԵՂԱՔԱՐ - լեռնագագաթ (3348 մ) Սյունիքի մարզում, Բարգուշատի լեռների արմ. մասում, Կիցք գյուղից 5,5 կմ հս-արմ.:

ԳԵՂԻ - գետ Սյունիքի մարզում: Սկիզբ է առնում Զանգեզուրի լեռների կենտրոնական մասի արլ. լանջերից և ձախից միախառնվում Ողջի գետին: Երկարությունը՝ 30 կմ:

ԳԵՂԻԿ - հանդ Լոռու մարզում, Վիրահայոց լեռների համակարգում, Մեծավան գյուղից 3 կմ հս-արմ.:

ԳԵՂՄԱՂԱՆ - լեռ (3319 մ) Կոտայքի մարզում, Գեղամա լեռների կենտրոնական կատարային մասում, Սևաբերդ գյուղից 7 կմ արլ. (պատմական՝ **Գեղ**):

ԳԵՂՄԻԿ - բլուր (830 մ) Տավուշի մարզում, Ռսկեպարի լեռնահամակարգում, Բարեկամավան գյուղից 1,5 կմ արմ.:

ԳԵՂՎԱՋՈՐ - հովիտ Սյունիքի մարզում, Գեղի գետի հովտի պատմական անունը:

ԳԵՆՈՏ - լեռնագագաթ (2066 մ) ՀՀ Արարատի, Վայոց ձորի մարզերի և Նախիջևանի սահմանագլխին, համանուն լեռներում, Զանգակատուն գյուղից 2,5 կմ հվ-արլ. (**Հունտում**):

ԳԵՆՈՏԻ ԼԵՌՆԵՐ - լեռներ ՀՀ Արարատի, Վայոց ձոր և Նախիջևանի սահմանագլխին: Գեղամա լեռների հվ-արմ. ճյուղավորությունը՝ սկսած Գնդասարից: Ամենաբարձր գագաթը՝ Գենտու (2066 մ) (**Հունտուի լեռներ**):

ԳԵՏԱՂԱՐՁ - գետակ Գեղարքունիքի մարզում, Խաչիջուր գետի օժանդակը: Սկիզբ է առնում Արսար լեռան հվ-արլ. լանջերից և Արծվաշեն գյուղից 1,5 կմ հվ-արլ. միախառնվում մայր գետին: Երկարությունը՝ 4,5 կմ:

ԳԵՏԱՌ - գետ Կոտայքի մարզում և Երևանում: Սկիզբ է առնում Գեղամա լեռների արմ. լանջերից և Երևան քաղաքի սահմաններում ձախից միախառնվում Հրազդան գետին: Երկարությունը՝ 24 կմ:

ԳԵՏԱՌՈՒ - գետ Լոռու մարզում, Ճերմակափոս գետի աջ օժանդակը: Սկիզբ է առնում Զավախքի լեռների արլ. լանջերից և Դաշտադեմ գյուղից 2 կմ հս-արմ. միանում մայր գետին: Երկարությունը՝ 15 կմ:

ԳԵՏԻԿ - գետ Գեղարքունիքի և Տավուշի մարզերում: Սկիզբ է առնում Սևանի լեռներից, հոսում Միափորի ու Արեգունի լեռների միջև և աջից միախառնվում Աղստև գետին: Երկարությունը՝ 58 կմ:

ԳԵՏԻԿ - գետակ Գեղարքունիքի մարզում, Սևանա լճի ավազանում, Մաս-

րիկ գետի ձախակողմյան վտակը: Սկիզբ է առնում Արևելյան Սևանի լեռների Փոքր Ծարասար լեռան արմ. լանջերից և Վերին Շործա գյուղից հս. միախառնվում մայր գետին: Երկարությունը՝ 9 կմ:

ԳԵՏԻԿ - հանդ Գեղարքունիքի մարզում, Թրասար լեռան հվ-արմ. լանջերին, Լուսաձոր գետի միջին հոսանքի ձախափնյակում, Վերին Շործա գյուղից 4,5 կմ հվ.:

ԳԵՏԻԿ - գետակ Լոռու մարզում, Փամբիջուր գետի աջ օժանդակը: Սկիզբ է առնում Կամար լեռան արմ. լանջից և Ծիլքար գյուղից 2,5 կմ հս. միախառնվում մայր գետին: Երկարությունը՝ 4,5 կմ:

ԳԵՏԻԿԻ ԱՐԳԵԼԱՎԱՅՐ - արգելավայր Գեղարքունիքի մարզում, Միափորի լեռների հվ. լանջերին, Գետիկի ձախափնյակում: Հիմնադրվել է 1971 թ., տարածքը՝ 6000 հա:

ԳԵՐԱՆ - լեռ (1634 մ) ՀՀ Տավուշի մարզի և Ադրբեջանի սահմանագրված: Այգեձոր գյուղից 5,5 կմ հվ-արմ.:

ԳԵՐԵՏ - լեռնագագաթ (2286 մ) Գեղարքունիքի և Տավուշի մարզերի սահմանագլխին, Միափորի լեռներում, Այգուտ գյուղից 12 կմ արլ.:

ԳԺՈՅԻ ԳԵՏ - գետ Գեղարքունիքի մարզում, Երփնաձոր գետի օժանդակը: Սկիզբ է առնում Սանդուխտասար լեռան հս-արլ. լանջերից և Մաքենիս գյուղի հվ. եզրում միախառնվում մայր գետին: Երկարությունը՝ 11 կմ:

ԳԻԺԳԵՏ - գետակ Գեղարքունիքի մարզում, սկիզբ է առնում Քաշաթաղ լեռան հվ. լանջերից և Ջիլ գյուղից 3 կմ հս-արմ. թափվում Սևանա լիճ: Երկարությունը՝ 5 կմ:

ԳԻԺԳԵՏ - գետակ Սյունիքի մարզում, Միսիան գետի աջ օժանդակը: Սկիզբ է առնում Ջանգեզուրի լեռների կենտրոնական մասից և Արևիս գյուղի մոտ

միանում մայր գետին: Երկարությունը՝ 8,5 կմ:

ԳԻԼԱՍԱՆՈՑԻ ՁՈՐ - ձոր Վայոց ձորի մարզում, Փշոնք գետի հովտում, Ջառիթափ գյուղից 2 կմ հվ.: Երկարությունը՝ 4 կմ:

ԳԻԼԻԿ - լեռնագագաթ (2039 մ) Լոռու և Տավուշի մարզերի սահմանագրված, Գուգարաց լեռների միջին մասում, Աթան գյուղից 2 կմ արլ.:

ԳԻԼԼԻ - նախկինում Սևանի հետ հաղորդակցվող մերձափնյա լիճ Գեղարքունիքի մարզում, Փոքր Մասրիկ գյուղից հվ-արմ.: Սևանա լճի մակարդակի իջեցման հետևանքով այժմ ցամաքած է:

ԳԻԼԼԻ - հանդ Գեղարքունիքի մարզում, Սևանա լճի ափամերձ գոտում, Նորակերտ գյուղից 3 կմ հվ-արմ.:

ԳԻՀՈՒ ՆՈՍՐԱՆՏԱՌԱՅԻՆ ԱՐԳԵԼԱՎԱՅՐ - արգելավայր Գեղարքունիքի մարզում, Սևանի լեռների հվ. լանջերին: Հիմնադրվել է 1958 թ., տարածքը՝ 3312 հա:

ԳԻՆԵՁՈՐ - գետակ Շիրակի մարզում: Սկիզբ է առնում Փամբակի լեռնահամակարգի Հարսնաքար լեռան հս. լանջից և Հովիտ գյուղից 1 կմ հվ-արմ. թափվում Կառնուտի ջրամբար: Երկարությունը՝ 8,5 կմ:

ԳԻՐԱԹԱՂ - գետ Սյունիքի մարզում: Սկիզբ է առնում Բարգուշատի լեռների Թառակատար գագաթի արլ. լանջերից և Ներքին Գիրաթաղ գյուղից ցած ձախից միախառնվում Ողջի գետին: Երկարությունը՝ 11 կմ:

ԳԼԱՁՈՐ - գետ Վայոց ձորի մարզում: Սկիզբ է առնում Թեքսարի լեռների հվ. լանջից և Եղեգնաձոր քաղաքից ներքև աջից միախառնվում Արփա գետին: Երկարությունը՝ 16 կմ:

ԳԼԽԱՆՈՑ - լեռնագագաթ (2495 մ) Սյունիքի մարզում, Բարգուշատի լեռ-

ների հս. ճյուղավորություններում, Դարբաս գյուղից 3 կմ արմ.:

ԳԼԽԱՏՈՒՆ - լեռնագագաթ (2582 մ) Սյունիքի մարզում, Զանգեզուրի լեռնահամակարգում, Հենաձոր գետի աջափնյակում, Մավլարդ գյուղից 6 կմ հս-արմ.:

ԳԼԽԱՏՈՒՆ - հանդ Սյունիքի մարզում, Զանգեզուրի լեռնահամակարգում, համանուն լեռան հվ. լանջին, Մավլարդ գյուղից 5,5 կմ հս-արմ.:

ԳԼԽԱՔԱՐ - լեռնագագաթ (1950 մ) Լոռու մարզում, Շիրակի լեռնահամակարգում, Փամբակ գետի ձախափնյակում, Սարալանջ գյուղից 1,5 կմ արմ.:

ԳԼՈՒԼ - լեռնագագաթ (2092 մ) Սյունիքի մարզում, Զանգեզուրի լեռնահամակարգի հս. մասում, Որոտան գետի աջափնյակում, Բոնակոթ գյուղից 3 կմ հս.:

ԳԼՈՒՆ ԶԱԳԵՁՈՐԻ - լեռ (3233 մ) Սյունիքի մարզում, Սյունիքի բարձրավանդակում, Սև լճից հվ., Ակներ գյուղից 7 կմ հս-արմ. (**Զանգեզուր, Զագեձոր**):

ԳԼՈՒՏ - լեռնագագաթ (2105 մ) Լոռու մարզում, Լեջանի լեռնագանգվածի հվ-արլ. ճյուղավորության՝ Կամատուրի լեռներում, Հովանաձոր գետի աջափնյակում, Հովանաձոր գյուղից 2 կմ հս.:

ԳԼՈՒՏ - հանդ Լոռու մարզում, Մենձոր գետի ձախափնյակում, Հովանաձոր գյուղից 5 կմ հս-արմ.:

ԳԼՈՒՏԻ ԼԵՌՆԵՐ - լեռներ Սյունիքի մարզում, Զանգեզուրի լեռնահամակարգում, Ագարակ քաղաքից 2 կմ արմ.: Ամենաբարձր գագաթը՝ Գողթնաքար (1935 մ):

ԳՄԲԵԹ - լեռնագագաթ (2557 մ) Գեղարքունիքի մարզում, Վարդենիսի լեռների հս. լանջի արլ. մասում, Մաքենիս գյուղից 4 կմ հվ-արմ.:

ԳՄԲԵԹ - հանդ Գեղարքունիքի մարզում, Սևքար լեռան հվ-արմ. լանջին, Մաղինա գյուղից 7,5 կմ հվ.:

ԳՄԲԵԹ - լեռ (1141 մ) Սյունիքի մարզում, Տեղի սարավանդում, Աղավնո գետի աջափնյակում, Կոռնիձոր գյուղից 2 կմ հս-արլ.:

ԳՅՈՒԼՍԳԱՐԱԿԻ ՍՈՃՈՒ ԱՐԳԵԼԱՎԱՅՐ - արգելավայր Լոռու մարզում, Լեջան լեռնագանգվածի հվ. լանջին, Ձորագետի ձախափնյակում: Հիմնադրվել է 1958 թ., տարածքը՝ 2586 հա:

ԳՅՈՒՂԱՀԱՆՆԻ - հանդ Գեղարքունիքի մարզում, Քաշաթաղ լեռնագագաթից 1,5 կմ հվ., Դիվանց լեռնանցքից արլ., Գիժգետի ակունքի ձախափնյակում:

ԳՅՈՒՄՐԻ - գետ Շիրակի մարզում, տե՛ս Կումայրի:

ԳՆԴԱԿՆ - գետակ Գեղարքունիքի մարզում, Խաչաղբյուրքերի աջակողմյան օժանդակը: Սկիզբ է առնում Վարդենիս լեռան հս. լանջերից և Արծվանիստ գյուղից հվ. միախառնրվում մայր գետին: Երկարությունը՝ 7 կմ:

ԳՆԴԱՀԱՆՆԻ - հանդ Սյունիքի մարզում, Բարգուշատի լեռնահամակարգում, Քաշունի գետի ձախափնյակում, Վանանդ գյուղից 1 կմ հս-արմ.:

ԳՆԴԱՁՈՐ - գետ Վայոց ձորի մարզում: Սկիզբ է առնում Թեքսարի լեռների հվ-արլ. լանջերից և Կարմրաշեն գյուղից ներքև աջից միախառնրվում Հերիեր գետին: Երկարությունը՝ 15 կմ:

ԳՆԴԱՍՍԱՐ - լեռնագագաթ (2878 մ) Գեղարքունիքի և Վայոց ձորի մարզերի սահմանագլխին, Գեղամա լեռների հվ. վերջավորության վրա, որտեղ հանգուցվում են Գեղամա և Վարդենիսի լեռները:

ԳՆԴԱՍՍԱՐԻ ԼԵՌՆԵՐ - լեռներ Վարդենիսի լեռների արմ. հատվածը՝ Գնդասար գագաթից մինչև Վարդենյաց լեռնանցքը: Ամենաբարձր գագաթը

Մկնասար լեռն է (2947 մ) , երկարությունը՝ 16 կմ:

ԳՆԴԱՔԱՐ - լեռնագագաթ (1754 մ) Արագածոտնի մարզում, Արագած լեռնազանգվածի արմ. ստորոտին, Թաթուկ գյուղից 1,5 կմ հս-արլ.:

ԳՆԴԱՔԱՐ - լեռ (1580 մ) Արագածոտնի մարզում, Քասաղ գետի ձախափնյակում, Օհանավան գյուղից 2,5 կմ հս-արլ.:

ԳՆԴԱՔԱՐ - լեռնագագաթ (2391 մ) Գեղարքունիքի մարզում, Վարդենիսի լեռների համակարգում, Ավերաջուր և Ջուլաքար գետերի ջրբաժանում, Ջուլաքար գյուղից 4 կմ հվ-արլ.:

ԳՆԴԱՔԱՐ - լեռնագագաթ (2050 մ) Լոռու մարզում, Բագումի լեռնահամակարգում, Գոգարան գյուղից 1,5 կմ արլ.:

ԳՆԴԵՎԱԶ - լեռնագագաթ (2669 մ) Վայոց ձորի մարզում, Ամուլսարի լեռների հ. մասում, Գնդեվազ գյուղից 6 կմ արլ.:

ԳՆԴՇԻԿ - լեռնագագաթ (2510 մ) Վայոց ձորի մարզում, Վայքի լեռնահամակարգում, Խաչիկ գյուղից 3 կմ հս-արլ.:

ԳՆԻՇԻԿ - գետ Վայոց ձորի մարզում: Սկիզբ է առնում Վայքի լեռների հս. լանջերից և Արենի գյուղից 2,5 կմ հս-արլ. ձախից միախառնվում Արփա գետին: Երկարությունը՝ 20 կմ:

ԳՈԳԱՐԱՆ - լեռնագագաթ (2977 մ) Լոռու և Շիրակի մարզերի սահմանագրված խին, Գոգարանց լեռների արմ. մասում, Մարապատ գյուղից 5 կմ հս.:

ԳՈԳԱՐԱՆ - գետ Լոռու մարզում: Սկիզբ է առնում Չքնաղի լեռների հվ. լանջերից և Մարահարթ գյուղից 1 կմ հվ-արլ. ձախից միախառնվում Փամբակին: Երկարությունը՝ 10 կմ:

ԳՈԳԱՐԱՆՑ ԼԵՌՆԵՐ - լեռներ, Բագումի լեռների արմ. հատվածը՝ Ուրասարից մինչև Սալուտ լեռնագագաթը: Առավելագույն բարձրությունը՝

Գոգարան լեռն է (2977 մ), երկարությունը՝ 24 կմ:

ԳՈԳԻ - լեռնագագաթ (3120 մ) ՀՀ Վայոց ձորի մարզի և Նախիջևանի սահմանագլխին, ամենաբարձրը Վայքի լեռներում, Մարտիրոս գյուղից 6,5 կմ հվ-արլ.:

ԳՈԳԻԼԻՃ - լիճ Սյունիքի մարզում, տե՛ս **Կապուտան**:

ԳՈԶԳՈԶ - գետ Սյունիքի մարզում, Մեղրի գետի ձախակողմյան վտակ: Սկիզբ է առնում Մեղրու լեռների հվ. լանջերից և մայր գետին է միանում Լիճք գյուղից հվ-արլ.: Երկարությունը՝ 13 կմ:

ԳՈՒՈՅԻ ՄԱՐ - լեռնագագաթ (2166 մ) Լոռու մարզում, Փամբակի լեռնահամակարգում, Որդնավ գետի ձախափնյակում, Ջրաշեն գյուղից 2,5 կմ հս.:

ԳՈՀԱՐ - գետ Վայոց ձորի մարզում: Սկիզբ է առնում Թեքսարի լեռների Մուրադսար գագաթի հվ-արմ. լանջերից և Կարմրաշեն գյուղի մոտ ձախից միախառնվում Գնդաձոր գետին: Երկարությունը՝ 12 կմ:

ԳՈՂԹ - գետ Արարատի մարզում: Սկիզբ է առնում Գեղամա լեռների կենտրոնական մասի արմ. լանջերից և ձախից միանալով Ոսկեջուր գետին կազմավորում է Ագատ գետը: Երկարությունը՝ 16 կմ:

ԳՈՂԹԱՆ - լեռնագագաթ (3146 մ) ՀՀ Սյունիքի մարզի և Նախիջևանի սահմանագլխին, Ջանգեզուրի լեռների կատարային մասում, Վահրավար գյուղից 5,5 կմ արմ.:

ԳՈՂԹԱՆ ԼԵՌՆԵՐ - լեռներ ՀՀ Սյունիքի մարզի և Նախիջևանի սահմանագլխին, Ջանգեզուրի լեռների հվ. հատվածը՝ Երկաթասար լեռնագագաթից մինչև Մեղրու կիրճը: Երկարությունը՝ 60 կմ:

ԳՈՂԹՆԱՀԱՆՂ - հանդ Գեղարքունիքի մարզում, Փոքր Մասրիկ գյուղից 3 կմ հվ-արմ.:

ԳՈՂԹՆԱՍՍԱՐ - բլուր (1922 մ) Գեղարքունիքի մարզում, Մասրիկ գետի աջափնյակում, Տորֆավան գյուղից 2 կմ հս.:

ԳՈՂԹՆԱՔԱՐ - լեռ (1935 մ) Սյունիքի մարզում, Կարճևան գյուղից 2 կմ հվ-արմ.:

ԳՈՂԻՆՔԻ ՁՈՐ - գոգավորություն Լոռու մարզում, Աղստև գետի վերնագավառում, Մարգահովիտ գյուղից 3 կմ հս.:

ԳՈՍԱՁՈՐ - հանդ Վայոց ձորի մարզում, Կգավոր գետի աջափնյակում, Գնիշիկ գյուղից 2 կմ հվ-արմ.:

ԳՈՍԱՋՈՐ - ցամաքող գետ Գեղարքունիքի մարզում: Սկիզբ է առնում Գեղամա լեռների արլ. լանջերից և Գավառ քաղաքի մոտ աջից միախառնվում Լայնաձոր գետին: Երկարությունը՝ 13 կմ (**Մաֆարենց գամի առու**):

ԳՈՍԱՍԱՐ - լեռնագագաթ (2885 մ) Լոռու և Կոտայքի մարզերի սահմանագլխին, Փամբակի լեռների արլ. մասում, Մեղրաձոր գյուղից 8 կմ հս-արլ.:

ԳՈՍԱՐԱՆ - լեռնագագաթ Սյունիքի մարզում, Մեղրու լեռների արլ. մասում, Ծավ գյուղից 7 կմ հվ-արմ.:

ԳՈՍԲԱԿ - լեռնագագաթ (2971 մ) Սյունիքի մարզում, Խուստուվի-Կատարի լեռների համակարգում, Կապան քաղաքից 6 կմ հվ-արմ.:

ԳՈՍԵՐ - լեռ (2269 մ) Սյունիքի մարզում, Սյունիքի բարձրավանդակում, Գորայք գյուղից 5,5 կմ արլ.:

ԳՈՍԵՐ - հանդ Սյունիքի մարզում, Սյունիքի բարձրավանդակում, Շաքարջուր գետի աջափնյակում, Քարահունջ գյուղից 0,5 կմ հս-արմ.:

ԳՈՍԵՐԻ ԱՌՈՒ - գետ Գեղարքունիքի մարզում: Սկիզբ է առնում Գեղամա լեռների արլ. լանջերից և ձախից միա-

խառնվում Գալլաձոր գետին: Երկարությունը՝ 13 կմ:

ԳՈՍԵՐԻ ՁՈՐ - գոգավորություն Տավուշի մարզում, Սթնասարի լեռներում, Մարիգյուղից 2,5 կմ հս-արլ.:

ԳՈՍԵՐՂԻ - լեռնագագաթ (1590 մ) Սյունիքի մարզում, Տանու լեռների ամենաբարձր գագաթը, Ծավ գյուղից 1,5 կմ հվ.:

ԳՈՍՇԱՋՈՐ - գետակ Գեղարքունիքի մարզում, Սպիտակջուր գետի աջ օժանդակը: Սկիզբ է առնում Սևանի լեռներից և Կախակն գյուղի հս-արլ. եզրին միախառնվում մայր գետին: Երկարությունը՝ 5 կմ:

ԳՈՍՇԱՎԱՐ - լեռնագագաթ (1956 մ) Տավուշի և Լոռու մարզերի սահմանագլխին, Գուգարաց լեռներում, Ոսկեպար գետի վերնագավառում:

ԳՈՍՇԱՎԱՐ - լեռնագագաթ (1682 մ) Տավուշի մարզում, Ոսկեպարի լեռնահամակարգում, Նոյեմբերյան քաղաքից 8 կմ հվ-արմ.:

ԳՈՍՇԱՏԵՂ - լեռնագագաթ (2952 մ) Սյունիքի մարզում, Զանգեզուրի լեռնահամակարգում, Արևիս գյուղից 6,5 կմ հս-արմ.:

ԳՈՍՐԱԳԵՏ - գետ Կոտայքի մարզում: Սկիզբ է առնում Փամբակի լեռների հվ. լանջերից և Մեղրաձոր գյուղից ներքև ձախից միախառնվում Մարմարիկ գետին: Երկարությունը՝ 15 կմ:

ԳՈՍՔ - լեռնագագաթ (3052 մ) ՀՀ Գեղարքունիքի մարզի և ԼՂՀ-ի սահմանագլխին, Արևելյան Սևանի լեռների հվ. մասում, Ներքին Շորժա գյուղից հվ-արլ.:

ԳՈՇ - գետակ Տավուշի մարզում, Գետիկի ձախ օժանդակը: Սկիզբ է առնում Արեգունի լեռներից և Գոշ գյուղից 2,5 կմ հս-արլ. ձախից միախառնվում մայր գետին: Երկարությունը՝ 8 կմ:

ԳՈՇԱԼԻՃ - լճակ Տավուշի մարզում, Արեգունի լեռների հս. լանջերին, Խա-

չարձան գետի ձախափնյակում, Ճերմակավան գյուղից 1 կմ հս-արմ.: Գտնվում է ծովի մակարդակից 1398 մ բարձրության վրա: Մակերեսը՝ 1,2 հա:

ԳՈՉԳԵՂ - լեռնագագաթ (2201 մ) Լոռու մարզում, Շիրակի լեռների արլ. ծայրամասում, Սարալանջ գյուղից 2 կմ արլ.:

ԳՈՈՍՎԱՆԻ ԱՎԱԶՈՒՏՆԵՐԻ ԱՐԳԵ-ԼԱՎԱՅՐ - արգելավայր Արարատի մարզում, Ուրծի լեռների հս. լանջերին: Հիմնադրվել է 1959 թ., տարածքը՝ 200 հա:

ԳՈՐ - լեռնագագաթ (1497 մ) Արագածոտնի և Շիրակի մարզերի սահմանագլխին, Արագածի լեռնահամակարգի արմ. մասում, Անիական գյուղից 1,5 կմ հվ.:

ԳՈՐԻՄ - գետ Սյունիքի մարզում, տե՛ս **Վարաքակ**:

ԳՈՐԻՄԻ ԱՐԳԵԼԱՎԱՅՐ - արգելավայր Սյունիքի մարզում, Սյունիքի բարձրավանդակում, Խնածախ գետի հովտում: Հիմնադրվել է 1971 թ., տարածքը՝ 1900 հա:

ԳՈՐՇ - գետակ Սյունիքի մարզում: Սկիզբ է առնում Զանգեզուրի լեռների հս-արլ. լանջերից և թափվում Սպանդարյանի ջրամբար: Երկարությունը՝ 6 կմ:

ԳՈՐՇԱՍԵՈ - լեռնագագաթ (1896 մ) Սյունիքի մարզում, Բարգուշատի լեռնահամակարգում, Աղանձուկգետի աջափնյակում, Տանձատափ գյուղից 1,5 կմ հվ.:

ԳՈՐՇՔԱՐ - լեռնագագաթ (2550 մ) Սյունիքի և Վայոց ձորի մարզերի սահմանագլխին, Զանգեզուրի լեռների հս. մասում, Կեչուտ գյուղից 6,5 կմ հս-արլ.:

ԳՈՐՈՒՏ - հանդ Սյունիքի մարզում, Սյունիքի բարձրավանդակում, Վարա-

քակ գետի աջափնյակում, Գորիս քաղաքից 0,5 կմ արմ.:

ԳՌԱՍՍԱՐ - լեռնագագաթ (3182 մ) Գեղարքունիքի մարզում, Գեղամա լեռների կատարային մասում, Գռիձոր գետի վերնագավառից հվ.:

ԳՌԳՈՍԱՆ - բլուր (1364 մ) Արագածոտնի և Կոտայքի մարզերի սահմանագլխին, Եղվարդ քաղաքից 6 կմ հվ-արմ.:

ԳՌԻՋՈՐ - գետ Գեղարքունիքի մարզում, Գավառագետի ձախ օժանդակը: Սկիզբ է առնում Գեղամա լեռների կենտրոնական մասից և Գավառ քաղաքում միանում նայր գետին: Երկարությունը՝ 24 կմ:

ԳՐԱՎ - գետ Վայոց ձորի մարզում: Սկիզբ է առնում Վայքի լեռներից և Ագարակաձոր գյուղի հս. մասում ձախից միախառնվում Արփային: Երկարությունը՝ 14 կմ:

ԳՐՎԱ - լեռնագագաթ (1329 մ) Սյունիքի մարզում, Փայլասարի լեռներում, Խղրանջ գյուղից 1,5 կմ հվ-արմ. (**Փայլասար**):

ԳՐՎԱ - լեռներ Սյունիքի մարզում, տե՛ս **Փայլասարի լեռներ**:

ԳՐՎԻՆ ՔԱՐ - լեռներ Սյունիքի մարզում, տե՛ս **Փայլասարի լեռներ**:

ԳՈՒԳԱՐԱՑ ԼԵՈՒՆԵՐ - լեռներ Լոռու և Տավուշի մարզերի սահմանագլխին, Դեբեդ և Աղստև գետերի ջրբաժանը: Ձգվում է Բովաքարի լեռների արլ. եզրից դեպի հս.՝ շուրջ 80 կմ: Առավելագույն բարձրությունը՝ Դժարսար լեռ (2245 մ):

ԳՈՒԹԱՆԱԹՈՒՄԲ - լեռ (2271 մ) Սյունիքի մարզում, Սյունիքի բարձրավանդակի Եռաբլրի սարավանդի արմ. մասում, Որոտան գետի ձախափնյակում, Որոտան գյուղից 3 կմ հս-արլ.:

ԳՈՒԹԱՆԱՍԱՐ - լեռ (2299 մ) Կոտայքի մարզում, Կոտայքի սարավան-

դի հս. մասում, Ֆանտան գյուղից 2,5 կմ հվ.:

ԳՈՒԹԱՆԱՔԱՐ - լեռնագագաթ (1916 մ) Լոռու մարզում, Լեջանի լեռնա-

զանգվածի հվ-արլ. մասում, Հովանա-
ձոր գետի ձախափնյակում, Հազվի
գյուղից 3 կմ արմ.:

Դ

ԴԱԼԱՐ - լեռնագագաթ (2616 մ) Կո-
տայքի մարզում, Ծաղկունյաց լեռների
համակարգում, Թեղենիս լեռնագա-
գաթից 3 կմ հվ-արլ.:

ԴԱԼԱՐ - գետ Կոտայքի մարզում:
Սկիզբ է առնում Ծաղկունյաց լեռների
արլ. բազուկներից և Արզական գյուղի
հվ. մասում աջից միախառնվում
Հրազդան գետին: Երկարությունը՝ 14
կմ:

ԴԱԼՄԱՅԻ ԱՅԳԻՆՆԵՐ - այգիներ Ե-
րևանի՝ Մալաթիա-Մեքաստիա հա-
մայնքի արլ. մասում:

ԴԱԼՄԱՅԻ ՋՐԱՆՑՔ - ջրանցք Երևա-
նում, սկիզբ է առնում Հրազդան գետի
աջ ափից, անցնում ժայռափոր
թունելով և դուրս գալիս Դալմայի այ-
գիները: Երկարությունը՝ 6,5 կմ:

ԴԱՀՆԱԿ - լեռնագագաթ Արարատի
մարզում, տե՛ս **Տասանորդ**:

ԴԱՀՆԱԿԻ ԼԵՌՆԵՐ - լեռներ Արարա-
տի մարզում, տե՛ս **Տասանորդի լեռներ**:

ԴԱՄԲԱՐԱՆ - լեռ (2726 մ) ՀՀ Գեղար-
քունիքի մարզի և Ադրբեջանի սահմա-
նագլխին, Սևանի լեռներում, Ըղձաձոր
գետի ձախափնյակում, Ջիլ գյուղից 5
կմ արլ.:

ԴԱՆԱԿ - հանդ Տավուշի մարզում, Տա-
վուշի լեռնահամակարգում, Խնձորուտ
գետի ձախափնյակում, Արծվաբերդ
գյուղից 9,5 կմ հվ-արմ.:

ԴԱՆԴԱՐ - լեռնագագաթ (1559 մ) Տա-
վուշի մարզում, Ոսկեպարի լեռների
միջին մասում, Ջուջևան գյուղից 5 կմ
հվ-արմ.:

ԴԱՇՏ - հանդ Գեղարքունիքի մարզում,
Կարճաղբյուր գետի աջափնյակում,
Կարճաղբյուր գյուղի հվ. եզրին:

ԴԱՇՏԱԳԵՏ - գետ Գեղարքունիքի
մարզում, Մարտունի գետի ձախ օժան-
դակը: Սկիզբ է առնում Վարդենիսի
լեռներից: Երկարությունը՝ 15 կմ:

ԴԱՇՏԱԿԻ ՋՈՒՐ - գետ Արագածոտնի
մարզում: Սկիզբ է առնում Արագած լե-
ռան հս. լանջերից և Ճարճակիս գյու-
ղից 4 կմ հվ-արմ. միանալով Քար-
աղբյուր գետին կազմավորում է Քա-
սաղ գետը: Երկարությունը՝ 25 կմ:

ԴԱՇՏԱՔԱՐ - լեռնագագաթ (1064 մ)
Արագածոտնի և Արմավիրի մարզերի
սահմանագլխին, Արագած լեռնա-
զանգվածի հվ-արմ. ստորոտին, Արշա-
լույս գյուղից 5,5 կմ հս-արմ.:

ԴԱՏԱԿԵՐՏ - լեռնանցք (2649 մ)
Սյունիքի մարզում, Կապրուսարի լեռ-
ների հվ. մասում, Դաստակերտ քաղա-
քից 3 կմ հվ-արլ.:

ԴԱՏԱԿԵՐՏ - գետակ Սյունիքի մար-
զում, Այրիգետի աջակողմյան վտակ՝
Կըշկոշտի օժանդակը: Սկիզբ է առնում
Կապրուսարի լեռների հվ-արմ. լան-
ջերից և Դաստակերտ քաղաքի մոտ
միանում մայր գետին: Երկարությու-
նը՝ 4 կմ:

ԴԱՎԹԻ ԲԼՈՒՐ - բարձունք Արմավիրի
մարզում, տե՛ս **Արմավիրի բլուր**:

ԴԱՏԱՎՈՐԱՅ - բլուր (963 մ) Տավուշի
մարզում, Գուգարաց լեռներում, Ջորա-
կան գյուղից 4 կմ հս-արլ.:

ԴԱՏՄԵԼԻՔ - լեռ(1834 մ) Սյունիքի
մարզում, Սյունիքի բարձրավանդա-

կում, Վաղատուր գետի ձախափնյակում, Վաղատուր գյուղից 0,5 կմ հս-արմ.

ԴԱՐԱՆԱԿ - գետ Գեղարքունիքի մարզում: Սկիզբ է առնում Արևելյան Սևանի լեռներից և աջից միախառնվում Մասարիկին: Երկարությունը՝ 20 կմ:

ԴԱՐԱՆԱԿ - լեռնագագաթ (3388 մ) ՀՀ Վայոց ձորի մարզի և ԼՂՀ-ի սահմանագլխին, Զանգեզուրի լեռների հս. մասում, Զերմուկ քաղաքից 12 կմ հս-արլ.:

ԴԱՐԲ - գետ Վայոց ձորի մարզում: Սկիզբ է առնում Զանգեզուրի լեռների Որոտանի լեռանցքից հվ. և Արտավան գյուղից 6 կմ հս-արմ. ձախից միախառնվում Արփային: Երկարությունը՝ 22 կմ:

ԴԱՐՔ - լեռնագագաթ (1414 մ) Լոռու մարզում, Վիրահայոց լեռներում, Կաճաճկուտ գյուղից 1 կմ արլ.:

ԴԻՄԱՍԱՐ - լեռնագագաթ (1618 մ) Արագածոտնի մարզում, Արագածի լեռնահամակարգի հվ. մասում, Արևուտ գյուղից 1,5 կմ հր. արլ.:

ԴԻՄԱՍԱՐ - լեռ (1970 մ) Շիրակի մարզում, Արագած լեռնազանգվածի հս-արմ. ստորոտին, Շիրակի սարահարթի արլ. կողմում, Սարալանջ գյուղից 0,5 կմ արմ.:

ԴԵԲԵՂ - գետ Լոռու մարզում, Կուրի ավազանում: Կազմավորվում է Ձորագետ և Փամբակ գետերի միախառնումից և Վրաստանի սահմաններում աջից թափվում Խրամ գետը: Երկարությունը ՀՀ-ում՝ 152 կմ (պատմական՝ **Ձորագետ**):

ԴԵԶԱՔԱՐ - լեռնագագաթ (1637 մ) ՀՀ Լոռու մարզի և Վրաստանի սահմանագլխին, Վիրահայոց լեռների կենտրոնական մասում, Բողկյաց գետի ձախափնյակում, Պրիվոլնոյե գյուղից 1 կմ հս-արլ.:

ԴԵՂԻՆ - լեռնագագաթ (2552 մ) Սյունիքի մարզում, Զանգեզուրի լեռներում, Արևիս գյուղից 2 կմ հս-արլ.:

ԴԵՂԻՆ - լեռնագագաթ (1240 մ) ՀՀ Տավուշի մարզի և Ադրբեջանի սահմանագլխին, Միափորի լեռների հս. ճյուղավորություններում, Ներքին Կարմիրաղբյուր գյուղից 1,5 կմ հս-արմ.:

ԴԵՂԻՆԱՂՔՑՈՐ - գետ Տավուշի մարզում, Աղստևի ձախ օժանդակը: Սկիզբ է առնում Հովք լեռան հս-արլ. լանջերից և Գանձաքար գյուղից 3 կմ հս-արմ. միախառնվում մայր գետին: Երկարությունը՝ 11 կմ:

ԴԵՄ - լեռ (1258 մ) Կարմրաշենի սարահարթում, Արմավիրի մարզի Քարակերտ գյուղից 5 կմ արմ.:

ԴԵՄԵՐ - լեռնագագաթ (2005 մ) Գեղարքունիքի մարզում, Գեղամա լեռների համակարգում, Օովասար գյուղից 3 կմ հվ-արլ.:

ԴԵՄԵՐ - լեռներ Գեղարքունիքի մարզում, Վարդենիսի լեռնահամակարգում, Ակունք գյուղից 1,5 կմ հվ-արմ.: Առավելագույն բարձրությունը համանուն լեռն է (2198 մ), երկարությունը 1,5 կմ:

ԴԵՄԵՐ - լեռնագագաթ (2198 մ) Գեղարքունիքի մարզում, համանուն լեռներում, Ակունք գյուղից 2 կմ հվ-արմ.:

ԴԺԱՐՍԱՐ - լեռնագագաթ (2245 մ) Լոռու մարզում, ամենաբարձր գագաթը Գուգարաց լեռներում, Քարինջ գյուղից 6,5 կմ հս-արլ.:

ԴԻԱՆԻՉՈՐ - գետ Արագածոտնի մարզում: Սկիզբ է առնում Արագած լեռան հվ. լանջերից և աջից միանում Շամիրամի սելավի հունին: Երկարությունը՝ 19 կմ:

ԴՐՈՒՍԱՉՈՐ - գետակ Սյունիքի մարզում: Սկիզբ է առնում Բարգուշատի լեռների հս. լանջերից և Շինուհայր գյուղից 3,5 կմ արլ. միախառնվում

Որոտան գետին: Երկարությունը՝ 8 կմ:

ԴԺՈՆՍԱՉՈՐ - հանդ Սյունիքի մարզում, Բարգուշատի լեռնահամակարգում, Կարմիր քար լեռան արլ. լանջին, Բարձրավան գյուղից 3 կմ արլ.:

ԴԻԴ - լեռնագագաթ (1272 մ) Լոռու մարզում, Սևորդյաց լեռնահամակարգում, Մարց գետի աջափնյակում, Դսեղ գյուղի հս. մասում:

ԴԻԴԿՈՆՆԵ - բլուր (1121 մ) Արագածոտնի մարզում, Քասաղ գետի աջափնյակում, Օշական գյուղի արլ. մասում:

“ԴԻԼԻՋԱՆ” - ազգային պարկ Տավուշի մարզում: Կազմավորվել է 2002 թվականին համանուն արգելանոցի հիման վրա՝ հազվագյուտ բուսական և կենդանական աշխարհի պահպանության նպատակով: Ընդհանուր տարածքը՝ 28 հզ. հա: Մահմանն անցնում է Արեգունու, Բովաքարի, Իջևանի, Միափորի և Փամբակի լեռներով:

ԴԻՄԱՅ - լեռնագագաթ (2360 մ) Տավուշի մարզում, Իջևանի լեռների հվ-արմ. մասում, Հաղարծին գյուղից 5 կմ հս-արմ.:

ԴԻՄԱՅԼԵՈ - լեռնագագաթ (3335 մ) Կոտայքի մարզում, Գեղամա լեռների կատարային մասում, Աժդահակ գագաթից արմ., Սևաբերդ գյուղից 11 կմ հվ-արլ.:

ԴԻՎԱԴՈՈ - հանդ Շիրակի մարզում, Կովասար լեռան հս. լանջին, Արփա լճի ջրամբարի հվ. եզրին, Շաղիկ գյուղից 3,5 կմ հվ-արլ.:

ԴԻՎԱՀԱՆԵ - հանդ Գեղարքունիքի մարզում, Արտանիշ լեռան հվ-արմ. լանջին, Շորժա գյուղից 3,5 կմ հվ-արլ.:

ԴԻՎԱՉՈՐ - գետակ Սյունիքի մարզում, Ծավ գետի աջ օժանդակը: Սկիզբ է առնում Որձաքար լեռան հս. լանջից և Ներքին Հանդ գյուղից 1 կմ արմ. միախառնվում մայր գետին: Երկարությունը՝ 2 կմ:

ԴԻՎԱՆՑ - լեռանցք (2443 մ) Գեղարքունիքի մարզում, Սևանի և Արեգունի լեռների հանգույցում, Քաշաթաղ լեռնագագաթից 1,5 կմ հվ-արմ.:

ԴԻՎԱՍԱՐ - լեռնագագաթ (3072 մ) ՀՀ Գեղարքունիքի մարզի և ԼՂՀ-ի սահմանագլխին, Վարդենիսի լեռնահամակարգում, Վերին Շորժա գյուղից 8 կմ հվ-արմ.:

ԴԻՏԱԲԼՈՐ - բլուր (1265 մ) Կոտայքի և Արարատի մարզերի սահմանագլխին, Գառնի գյուղից 6 կմ հվ-արմ.:

ԴԻՏԱՍԱՐ - լեռնագագաթ (2432 մ) Կոտայքի մարզում, Ամպաջուր և Խորունձոր գետերի ջրբաժանում: Մեղրաձոր գյուղից 6 կմ հս-արլ.:

ԴԻՏՎԱՆԻՉՈՐ - գետ Տավուշի մարզում: Սկիզբ է առնում Վարագի լեռների արմ. լանջերից և Դիտավան գյուղից 1 կմ հս-արմ. աջից միախառնվում Աղստև գետին: Երկարությունը՝ 10 կմ:

ԴԻՏՎԱՆՔ - լեռնագագաթ (2835 մ) Գեղարքունիքի և Վայոց ձորի մարզերի սահմանագլխին, Գեղամա և Վարդենիսի լեռների հանգուցման կետում:

ԴԻՏԱՔԱՐ - լեռնագագաթ (2190 մ) Լոռու մարզում, Բովաքարի լեռների հս-արմ. ճյուղավորություններում, Սարիաղբյուր գետի վերնագավառում, Ահնիձոր գյուղից 5,5 կմ հվ-արմ.:

ԴԻՑԱՐՈՏԻ ԼԵՈՆԱՆՑՔ - լեռանցք (2320 մ) Գեղարքունիքի մարզում, Արեգունի լեռներում, Դրախտիկ գետի վերնագավառից դեպի Բարեբեր գետի հովիտը:

ԴԻՔԱՐ - լեռնագագաթ Տավուշի մարզում, տե՛ս **Քարիբերդ**:

ԴՐԱՆՏԻԿ - գետ Գեղարքունիքի մարզում: Սկիզբ է առնում Արեգունի լեռների հվ. լանջերից և Դրախտիկ գյուղից 2 կմ հվ-արմ. թափվում Սևանա լիճ: Երկարությունը՝ 11 կմ:

